

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (JICA)
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԶՀԳ)

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏԿԱԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՍԵՊՏԵՄԲԵՐ-1999

JICA LIBRARY



J 1154465 (7)

CRC ԱՐՏԵՐԿՐՅԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԸ
ՏՈՄԱՅՈՒ ԵՎ ԸՆԿ.

ՏՈԿԻՈ, ՃԱՊՈՆԻԱ

MPI
CR(3)
99-162

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (JICA)
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԶՀԳ)

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՍԵՊՏԵՄԲԵՐ-1999

CRC ԱՐՏԵՐԿՐՅԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԸ
ՏՈՄԱՑՈՒ ԵՎ ԸՆԿ.

ՏՈԿԻՈ, ՃԱՊՈՆԻԱ



1154465{7}

ՆԱԽԱԲԱՆ

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության Կառավարության խնդրանքի, Ճապոնիայի Կառավարությունը որոշեց իրականացնել հետազոտություն մասնավոր հատվածի զարգացման մասին և հետազոտական աշխատանքները վստահեց Ճապոնիայի Միջազգային համագործակցության գործակալությանը (JICA):

JICA-ն 1998թ. հոկտեմբերից մինչև 1999թ. հուլիսը Հայաստան առաքեց CRC արտերկրյա համագործակցության բաժնետիրական ընկերությունը ներկայացնող սրն. Յուջիրո Հիգաշիի գլխավորած հետազոտական քիմիկն, որ կազմակերպված էր նշված ընկերության և Tohmatsu & Co-ի կողմից:

Թիմը քննարկումներ անցկացրեց Հայաստանի Հանրապետության համապատասխան պաշտոնյաների հետ և կատարեց տեղում հետազոտություն: Ճապոնիա վերադառնալուց հետո քիմը շարունակեց և ավարտին հասցրեց իր հետազոտական գործունեությունը, որի արդյունքներն ի մի են բերված ներկայացվող զեկույցում:

Հուսով եմ, որ սույն զեկույցը նպաստ կբերի Հայաստանի մասնավոր հատվածի հետագա զարգացմանը և երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը:

Ցանկանում եմ իմ անկեղծ երախտագիտությունը հայտնել բոլոր նրանց, ովքեր մասնակցել են տվյալ հետազոտական նախագծի իրականացմանը և սերտորեն համագործակցել քիմի անդամների հետ:

Սեպտեմբեր, 1999թ.



Կիմիո Ֆուջիտա
Նախագահ
Ճապոնիայի միջազգային
համագործակցության գործակալություն

Սեպտեմբեր, 1999թ.

Պրն. Կլեմիա Ֆուչիտա

Նախագահ

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն

Փոխանցման ուղերձ

Սույնով հաճույք ունենք ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածի զարգացման մասին հետազոտության վերջնական զեկույցը:

Տվյալ զեկույցը պատրաստվել է որպես Հայաստանի մասնավոր հատվածի խթանման հիմնարար պլան: Այն ներառում է ամտեսությանը դիմակայող հիմնական խնդիրների վերլուծությունը, մոդելային ձևերակայությունների մանրագնահիմն դիտարկումը՝ ներառյալ կառավարման բարեփոխման ուղեցույց, նպատակային ենթհատվածների զարգացման կարիքների գատորոշումը (եկեղով միկրո մակարդակում վեր հանված հիմնադրերից), Հայաստանի տնտեսության զարգացման միջամտամեկտ մտապատկերի ձևավորումը, զարգացման գերակայությունների, ռազմավարության ու մերողարարության սահմանումը, ձևերակայությունների վերակառուցման առաջարկություններ կառավարիչներին և քաղաքականությանը վերաբերող առաջարկություններ (ներառյալ իրականացման ծրագրերը) Հայաստանի կառավարությանը:

Հայաստանի ժողովուրդը վերջին 11 տարիների ընթացքում աննախադեպ դժվարությունների ծանր շրջան է ապրել, ներառյալ 1988թ. Սսիտակի երկրաշարժը, առճակատումն Ադրբեջանի հետ և հաջորդած շրջափակումը, ՆՆՄ-ի վերադարձը և, ի հետևանք այն կազմող հանրապետությունների անկայացման, տնտեսական կապերի քայքայումը, արդյունաբերության կազմալուծումը, գերտղանք և էներգետիկ ճգնաժամը: Հայաստանը, ի հեճուկս դժվարին ժամանակների, ԱՊՀ երկրների շարքում առաջամարտիկի դեր է խաղում ժողովրդավարության սկզբունքների վրա հիմնված շուկայական տնտեսությանն անցնելու ճանապարհին:

Հայաստանի կայուն տնտեսական առաջընթացի ապահովումը պայմանավորված է մասնավոր հատվածի դիմամիկ զարգացմամբ:


Ձեկույցում որոշ մանրամասներով ներկայացված են առաջարկություններ կառավարության դերի և վերջինիս կողմից ձեռք ստեղիք այն մի քանի քայլերի մասին, որոնք էական նշանակություն ունեն մասնավոր հատվածի զարգացման համար: Հետազոտական քիմր լիսիույս է, որ Հայաստանի կառավարությունը, հեմվելով սույն զեկույցի վրա և մշակելով ու իրականացնելով զարգացման անհրաժեշտ միջոցառումները, կստեղծի այնպիսի միջավայր, որտեղ ձեռներեց գործարարները, օգտագործելով մարդկանց ունակությունները և աշխատելու պատրաստակամությունը, ի գորու կլինեն ծավալել արդյունավետ ու շահավետ գործունեություն և դրանով իսկ կապահովեն Հայաստանի կայուն տնտեսական զարգացումը: Այս առումով հետազոտական քիմն անկեղծորեն ցանկանում է, որպեսզի զեկույցը դառնա մի փաստաթուղթ, որն իր ծառայությունը կրերի կառավարության տնտեսական քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը:

Հետազոտության ողջ ընթացքում մենք բազմակողմանի և անսահման աջակցություն ենք ստացել Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության և Ճապոնիայի այլ կառավարական կազմակերպությունների կողմից, որոնց քիմն իր խորին երախտագիտությունն է հայտնում: Մենք նաև երախտագիտ ենք ՉՀԳ-ին, ինչպես նաև հայկական կառավարության համապատասխան մարմիններին և ձևերակայությունների կառավարիչներին՝ հետազոտության ընթացքում ցուցաբերված օժանդակության ու համագործակցության համար:

Ձեզ անկեղծ նվիրված,

东 勇 次 郎

Յուջիրո Հիգաշի, քիմի դեկավալ
Հետազոտություն Հայաստանի
Հանրապետությունում մասնավոր
հատվածի զարգացման մասին



Հապավումներ

Հասանում	Նշանակություն
ԱԱՀ / VAT	Ավելացված արժեքի հարկ
ԱԱՆ / MIT	Արդյունաբերության և առևտրի նախարարություն, ՀՀ
ԱԳՆ / MoFA	Արտաքին գործոց նախարարություն, ՀՀ
ԱՀԿ / WTO	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
ԱՄԿ / IAPC	Առողիտի միջազգային կարգի հանձնախումբ
ԱՄՀ / IMF	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱԳԿ / GMP	Արտադրման սրտաչափ կարգ
ԱԳՀ / CIS	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԳԱԱ / NAS	Գիտությունների ազգային ակադեմիա, ՀՀ
ԳՀԻ / SRI	Գիտահետազոտական ինստիտուտ
ԳՈՍՍ / GOST	Խորհրդային Միության պետական ստանդարտ
GTZ	Deutsche Gesellschaft Für Technische Zusammenarbeit
ԳՏՆ / MOA	Գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ
ԵՀՀԱ / ACCA	Երովյալ հավաստագրված հաշվապահների ասոցիացիա
ԶՀԳ / ADA	Զարգացման հայկական գործակալություն
ԶՊԱ / ODA	Զարգացման պաշտոնական աջակցություն
ԷՆ / ME	Էներգետիկայի նախարարություն, ՀՀ
ՀԲ / WB	Համաշխարհային բանկ
ՀԿԲ / CBA	Հայաստանի Կենտրոնական բանկ
ՀՀ / RA	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԱ / AAA	Հայաստանի հաշվապահական ասոցիացիա
ՀՄՀ / IAS	Հաշվապահության միջազգային համակարգ
ՀՄՍՀ / IASC	Հաշվապահության միջազգային ստանդարտների հանձնախումբ
ՀՄՖ / IFAC	Հաշվապահների միջազգային ֆեդերացիա
ՀՆԱ / GDP	Համախառն ներքին արդյունք
ԶԱՀ / ESF	Չեռնաբերությունների աջակցման հիմնադրամ
ՃԱԱԿ / JETRO	Ճապոնիայի արտաքին առևտրի կազմակերպություն
ՃԱԶԸ / JODC	Ճապոնիայի արտերկրյա զարգացման ընկերություն
ՃՄՀԳ / JICA	Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն
ՄԱԶԾ / UNDP	Միացյալ Ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր
ՄՀԻ / IRIS	Միջազգային հետազոտական ինստիտուտներ
ՄՀՖՀՀ / SWIFT	Միջբանկային համաշխարհային ֆինանսական հեռահաղորդակցման ընկերություն
ՄՆՄԶԳ / USAID	Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ՆԽՄ / FSU	Նախկին Խորհրդային Միություն
ՆԽՊՊԽ / SIPPB	Ներդրումների խթանման և պաշտպանության պետական խորհուրդ
ՎԶՆԲ / EBRD	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏՆ / MOT	Տրանսպորտի նախարարություն, ՀՀ
TRACECA	Եվրոպա-Կովկաս-Ասիա արանապորտային միջանցք
ՓԱԱԳՀ / TACIS	Փորձագիտական աջակցություն Անկախ Պետությունների Համագործակցությանը
ՓՀԻ / SDR	Փոխանման հատուկ իրավունքներ
ՓՄԶ / SME	Փոքր և միջին ձեռնարկություն
ՓՄԾ / T.I.R.	Տարբեր երկրներով ճանապարհային բեռնափոխադրումների միջազգային համակարգ
ՔԱՄԿ / ICAO	Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն
ՖԷՆ / MoFE	Ֆինանսների և Արժույթի կազմակերպություն, ՀՀ

Վերջնական զեկույցի բովանդակությունը

Նախաբան
Հապավումներ

1. Հետազոտության նախադրյալները և նպատակը	1-1
1.1. Հետազոտության նախադրյալները և մանրամասները	1-1
1.2. Հետազոտության նպատակը և շրջանակները	1-1
1.3. Հետազոտության մեթոդաբանությունը	1-4
2. Սոցիալական տնտեսության պայմանները և խնդիրները	2-1
2.1. Սոցիալական տնտեսության պայմանները	2-1
2.1.1. Մակրոտնտեսական իրավիճակը	2-1
2.1.2. Արդյունաբերական հատվածի պայմանները	2-9
(1) Բնդհանրագիրը	2-9
(2) Նպատակային ենթահատվածների վիճակը	2-13
2.2. Առանցքային տնտեսական խնդիրները	2-15
2.2.1. Առանցքային տնտեսական խնդիրները սլայմանավորող գործոնները	2-15
(1) Կառավարությանը, ձեռնարկություններին, տնային տնտեսություններին և տնտեսական միջավայրին դիմակայող խնդիրները – պատճառները և հետևանքները	2-17
(2) Ֆինանսական դեֆիցիտը	2-20
(3) Միջազգային վճարումների հաշվեկշիռը	2-25
(4) Զբաղվածությունը	2-26
2.2.2. Կառավարության տնտեսական քաղաքականությունը	2-30
(1) Արդյունաբերական քաղաքականությունը	2-30
(2) Առևտրային քաղաքականությունը	2-32
(3) Առավելությունները և թեթևությունները	2-35
(4) Ներդրումների խթանման քաղաքականությունը	2-37
(5) Սեփականաշնորհման քաղաքականությունը	2-40
2.2.3. Կառուցվածքային հենքի ներկա կացությունը	2-43
(1) Իրավական համակարգը	2-43
(2) Հարկումը	2-44
(3) Ֆինանսական համակարգը	2-47
(4) Հաշվապահության և աուդիտի համակարգը	2-48
(5) Մարդկային ռեսուրսների զարգացումը	2-50
(6) Գործարարության աջակցման համակարգը	2-54
2.2.4. Ենթակառուցվածքները	2-58
2.2.5. Հետազոտումների և մշակումների հաստատությունները	2-64
2.2.6. Բնական ռեսուրսները	2-65
2.3. Սոցիալական խնդիրները	2-67
2.3.1. Ազգաբնակչության արտահոսքը և մարդահամարի կարևորությունը	2-67
(1) Հայաստանի արդի ազգաբնակչությունը	2-67
(2) Ազգաբնակչության արտահոսքի նշանակությունը	2-72
(3) Կառավարության ձեռնարկելիք միջոցառումները	2-77

3. Նպատակային ենթահատվածները և մոդելային ձեռնարկությունները	3-1
3.1. Գիտագնմամբ նպատակը	3-1
3.1.1. Գնահատման մոդելային ձեռնարկությունները	3-2
3.1.2. Բնութագրված մոդելային ձեռնարկությունները	3-4
3.1.3. Նպատակային ենթահատվածների գլխավոր բնութագրերը և ընդհանուր հիմնահարցերը	3-4
3.2. Փ/Ա-ն և մոդելային ձեռնարկության կառավարումը բարելավելու համապարփակ ծրագիրը	3-9
3.2.1. Լիցենզիատեխնիկական և Լիցենզիայի արդյունաբերություն	3-9
(1) Գիտագնմված ձեռնարկությունների ընդհանրագիրը	3-9
(2) Փ/Ա մոդելային ձեռնարկությանը	3-14
(3) Բիզնեսի բնագավառը և նպատակային շուկան, որոնց վրա այնուր է կենտրոնանա «Սիլիոն»-ը	3-27
(4) Փորձագիտական աջակցության ազդեցությունը	3-28
3.2.2. Մեքենաշինական արդյունաբերություն	3-31
(1) Գիտագնմված ձեռնարկությունների ընդհանրագիրը	3-31
(2) Փ/Ա մոդելային ձեռնարկությանը	3-36
(3) Առաջարկություններ մոդելային ձեռնարկությանը	3-46
(4) Փորձագիտական աջակցության ազդեցությունը	3-49
(5) Բիզնեսի բնագավառը և նպատակային շուկան	3-51
3.2.3. Քիմիական (դեղագործական) արդյունաբերություն	3-52
(1) Այցելած ձեռնարկությունների վիճակը	3-52
(2) Ընդհանուր խնդիրները	3-55
3.3. Չարգացման ուղղությունը և հեռանկարային ապրանքները	3-59
3.3.1. Լիցենզիատեխնիկական և Լիցենզիայի արդյունաբերություն	3-59
(1) Չարգացման ուղղությունը	3-59
(2) Հեռանկարային ապրանքները	3-60
3.3.2. Մեքենաշինական արդյունաբերություն	3-66
(1) Չարգացման ուղղությունը	3-66
(2) Հեռանկարային ապրանքները	3-67
3.3.3. Քիմիական (դեղագործական) արդյունաբերություն	3-68
(1) Չարգացման ուղղությունը	3-68
(2) Հեռանկարային ապրանքները	3-71
(3) Ամինոթթուների արտադրություն կազմակերպելու առաջարկը	3-73
4. Առաջարկություններ ձեռնարկություններին	4-1
4.1. Կառավարման բարեփոխումը	4-1
(1) Կառավարիչների դերը	4-2
(2) Ուժեղ և քույր կողմերի վերլուծությունը	4-5
(3) Հեռանկարային ապրանքների և շուկաների ընտրումը	4-8
4.2. Ծուկայավարումը	4-11
4.3. Տեխնոլոգիայի կատարելագործումը	4-19
(1) Որակի բարելավումը	4-19
(2) Տեխնոլոգիայի կատարելագործումը	4-22
(3) Նոր ապրանքների մշակումը	4-23

4.4. Չեղարկությունում մարդկային ռեսուրսների զարգացումը	4-27
(1) Կազմակերպական կողմը	4-27
(2) Անհատական կողմը	4-31
(3) Կառավարման համակարգերը և մարդկային ռեսուրսների կառավարումը.....	4-33
4.5. Անհապաղ միջոցառումների իրականացումը.....	4-36
(1) Կարճա-/միջնա-/երկարաժամկետ գործարար պլանների մշակումը.....	4-36
(2) Պլանի կառավարման բոլորաշրջանի ներդրումը	4-37
(3) Պլանի կառավարման հաշվետվությունների պատրաստումը.....	4-37
4.6. Կարճա-/միջնա-/երկարաժամկետ գործարար պլանի կազմումը	4-38
(1) Գործարար պլանի կազմման ենթադրույթները	4-38
(2) Կարճաժամկետ գործարար պլանը.....	4-39
(3) Միջնաժամկետ գործարար պլանը.....	4-41
(4) Երկարաժամկետ գործարար պլանը.....	4-42
5. Քաղաքականությանը վերաբերող առաջարկություններ	
Հայաստանի Կառավարությանը.....	5-1
5.1. Չարգացման պլանի նախադրյալների և անհրաժեշտության ընկալումը.....	5-1
5.1.1. Նախադրյալների ընկալումը	5-1
(1) Չարգացման մտապատկերի մշակակայությունը.....	5-1
(2) Քաղաքականության խնդիրների ընկալումը.....	5-2
(3) Հայաստանի տնտեսության կառուցվածքի ընկալումը	5-5
5.1.2. Պլանի անհրաժեշտությունը	5-7
5.2. Չարգացման միջնաժամկետ պլանի մտապատկերի ստեղծումը	5-9
5.2.1. Չարգացման միջնաժամկետ պլանի մտապատկերը.....	5-9
(1) Պլանավորման նախապայմանները.....	5-9
(2) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՏԱՊԼԱՆԻ-2005» հանձնախմբի խնդիրները	5-11
5.2.2. Ռազմավարությունը և մարտավարությունը.....	5-13
5.2.3. Պլանավորման մեթոդաբանությունը և իրականացումը	5-17
5.2.4. Տարածքային զարգացման քաղաքականությունը	5-19
5.3. Մասնավոր հատվածի զարգացման պլանը	5-23
5.3.1. Չարգացման ռազմավարությունը և մարտավարությունը	5-23
(1) Չարգացման գերակայությունները.....	5-24
(2) Արյունաբերական զարգացման քաղաքականությունը	5-26
(3) Արտահանման խթանման քաղաքականությունը.....	5-30
(4) Սեփականաշնորհման մեթոդաբանության կատարելագործումը.....	5-35
(5) Ներդրումների խթանման քաղաքականությունը	5-38
5.3.2. Կառուցվածքային հենքի բարելավումը և օգտագործումը.....	5-42
(1) Իրավական համակարգը և դատական միջավայրը	5-42
(2) Հարկային խթանները.....	5-44
(3) Գիտնական հատվածի բարեփոխումը	5-50
(4) Հաշվապահությունը և աուդիտը	5-53
(5) Տեխնոլոգիայի զարգացումը և ոլորտի բարելավումը	5-56
(6) Մարդկային ռեսուրսների զարգացումը	5-59
(7) ԳՀԻ-ների վերակազմավորումը և արդյունավետ օգտագործումը	5-62
5.3.3. Ենթակառուցվածքները.....	5-66


5.4. Չարգացման պլանի իրականացման նպատակով պետական գործակալության և գործարարության աջակցման համակարգերի ստեղծումը.....	5-70
(1) Տնտեսական զարգացման և պլանավորման նախարարության ստեղծումը.....	5-70
(2) Չարգացման հայկական բանկի ստեղծումը.....	5-73
(3) ՓՄՁ-երի ֆինանսական աջակցման համակարգի ստեղծումը.....	5-78
(4) Արտաքին առևտրի սպասարկումն աջակցող համակարգի ստեղծումը.....	5-82
(5) ՋՀԳ-ի ամրապնդումը.....	5-84
(6) ՓՄՁ-երի ռիսկային ձեռնարկների աջակցման կենտրոնը.....	5-88
5.5. Առաջարկություններ իրականացման ծրագրի վերաբերյալ.....	5-89
(1) Տնտեսական զարգացման և պլանավորման նախարարության ստեղծումը.....	5-89
(2) Չարգացման հայկական բանկի ստեղծումը.....	5-89
(3) ՓՄՁ-երի ֆինանսական աջակցման համակարգի ստեղծումը.....	5-89
(4) Արտահանական արդյունաբերության զարգացման նախագծի մշակումը.....	5-89
(5) Արդյունաբերական գոտու ստեղծումը.....	5-90
(6) Գումարավոր մետաղների, այլ բվում՝ պղնձի և մոլիբդենի հանքավայրերի զարգացման և արժեքաբեր շահագործման իրագործելիության նախնական վերլուծության իրականացումը.....	5-90
(7) Մարդահամարի անցկացումը.....	5-90
(8) ՓՄՁ-երի ռիսկային ձեռնարկների աջակցման կենտրոնի ստեղծումը.....	5-91
(9) Զբոսաշրջության զարգացման կենտրոնի ստեղծումը.....	5-91

Երախտագիր

- Հավելված 1 Այցելված անձինք և գրասենյակները
- Հավելված 2 Ձեռնարկության գնահատման թերթիկը
- Հավելված 3 Ձեռնարկությունների գնահատման աղյուսակը (ամփոփագիր)
- Հավելված 4 Ձեռնարկությունների հարցաթերթիկը
- Հավելված 5 Ձեռնարկությունների խոսքը
- Հավելված 6 Մոդելային ձեռնարկության ուրվագիրը («Միրիուս»)
- Հավելված 7 Մոդելային ձեռնարկության ուրվագիրը («Հայ Թիմ»)
- Հավելված 8 Հավաքված փաստաթղթերը

Գլուխ 1

Չեղարկության նախադրյալները և նպատակը



1. Հետազոտության նախադրյալները և նպատակը

1.1 Հետազոտության նախադրյալները և մանրամասները

1991թ. սեպտեմբերի 23-ին անկախություն ձեռք բերելուց ի վեր Հայաստանը, ի հեճուկս քաղաքական, արտաքին, սոցիալական ու տնտեսական բազում բարդությունների, հաջողությամբ իրականացրել է ժողովրդավարության և շուկայական տնտեսության սկզբունքների հաստատմանը կոչված բարեփոխումներ և անհրաժեշտ քայլեր է ձեռնարկել իրավական բարեփոխումների ու պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման ասպարեզում: ՆԽՄ-ի փլուզումը բերեց նաև արտադրական կապերի քայքայմանը ԱՊՀ երկրների և Հայաստանի միջև (որը ՆԽՄ-ի օրոք արդյունաբերական զարգացում էր ստանում) և, ի հետևանք իր արտադրանքների կազմալուծման, վերջինս հայտնվեց սոսկալի տնտեսական պայմաններում: Սեփականաշնորհված ձեռնարկություններից շատերը մինչ օրս էլ կա՛ն մատնված են անգործության, կա՛ն էլ գործում են բերի ծանրաբեռնվածությամբ:

Տվյալ իրավիճակում Հայաստանի կառավարությունը, առաջնություն տալով տնտեսության վերականգնման համար անհրաժեշտ օտարերկրյա ուղղակի ներդրումների և արտահանման խթանմանը, խնդրել էր Ռապոնիայի կառավարությանը՝ կատարելու «Հետազոտություն մասնավոր հատվածի զարգացման մասին»: Ելնելով այս խնդրանքից, Ռապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը 1998թ. փետրվարին Հայաստան առաքեց նախագծերի ընտրության հաստատմամբ զբաղվող մի հետազոտական քիմի, իսկ նույն տարվա հունիսին ժամանեցին նախնական հետազոտական քիմի անդամները և Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հետ մեկտեղ համաձայնեցրին հետազոտության աշխատանքների շրջանակը: Մասնավոր հատվածի զարգացման վերաբերյալ սույն հետազոտությունն իրականացվել է համաձայն Հայաստանի կառավարության խնդրանքի և աշխատանքների սահմանված շրջանակի:

1.2 Հետազոտության նպատակը և շրջանակները

Հետազոտությունը ձեռնարկվել է մասնավոր հատվածի խթանման հիմնարար պլան մշակելու և այդ պլանը Հայաստանի կառավարությանը ներկայացնելու նպատակով: Հետազոտական քիմը մանրամասնորեն հետազոտել է այն առաջնային ենթահատվածները՝ էլեկտրատեխնիկա/էլեկտրոնիկա, մեքենաշինություն և քիմիական (սկզբունքորեն՝

ղեկագործական) արդյունաբերություն, որոնք սահմանվել էին Ռասայոնիայի միջազգային համագործակցության գործակալության և Ջարգացման հայկական գործակալության (ՋՀԳ) միջև 1998թ. հունիսի 22-ին համաձայնեցված «աշխատանքների շրջանակով»:
Հետազոտության ողջ ընթացքում հետազոտական քիմը նաև ջանացել է տեղի գործընկերոջը և համապատասխան կառավարական պաշտոնյաներին փոխանցելու հետազոտությանն առնչվող փորձառությունն ու մեթոդական մոտեցումները:

Հետազոտության շրջանակներում ներառված են բազմաթիվ ոլորտներ, ինչպես շարադրված է ստորև.

(1) Մասնավոր հատվածի զարգացման քաղաքականության և առկա վիճակի քննությունն ու վերլուծությունը

- Ազգային զարգացման սլանդը և այլ ուղղնավարական ու մարտավարական մոտեցումները
- Մասնավոր հատվածի զարգացման սլանդներն ու ծրագրերը
- Օրենքներն ու կարգավորումը
- Մակրոտնտեսությունը
- Մեֆիականաչնորիումը
- Արտաքին առևտուրը, ներդրումները և օժանդակումը
- Ֆինանսական մեխանիզմը
- Հարկման համակարգը
- Կառուցվածքային հենքը և գործարար աջակցությունը
- Մարդկային ռեսուրսների զարգացումը
- Ենթակառուցվածքները

(2) Նպատակային ենթահատվածների առկա իրավիճակի զննումն ու վերլուծությունը

- Նպատակային ենթահատվածների խթանմանն ուղղված կառավարական միջոցառումները
- Նպատակային ենթահատվածների դիրքը Հայաստանի տնտեսությունում
- Միջազգային շուկայի ներկա կացությունը
- Արդյունաբերական տեխնոլոգիան և արտադրական կարողությունը
- Գլխավոր ձեռնարկությունների կատարողականը

(3) Նպատակային ենթահատվածներից բնութագրված մոդելային ձևոճարկությունների մանրագնումը

- Մոդելային ձևոճարկությունների կատարողականը
- Արդյունաբերական տեխնոլոգիան և արտադրական կարողությունը
- Ֆինանսական կացությունը
- Կազմակերպական կառուցվածքը
- Մարդկային ռեսուրսները
- Հիմնական կամ/և հեռանկարային սպրանքների շուկայավարումը
- Կաճառքի խթանումը
- Հումքի ձեռքբերումը

(4) Մասնավոր հատվածի զարգացման հիմնարար պլանի և գործողությունների ծրագրի ձևավորումը


- Գործարար միջավայրի բարելավման միջոցառումները
- Համապատասխան կազմակերպությունների գործառույթը
- Չարգացման սցենարների կամ սխեմաների հայեցակարգը
- Մասնավոր հատվածի զարգացման գործողությունների ծրագիրը

(5) Ըստ հատվածների զարգացման մտապատկերի և գործողությունների ծրագրի ձևավորումը

- Նպատակային ենթահատվածներից յուրաքանչյուրի ապագա զարգացման պլանը
- Նպատակային ենթահատվածներից յուրաքանչյուրի արտադրական կառուցվածքի բարեփոխումների պլանը
- Մոդելային ձևոճարկություններից յուրաքանչյուրի կառավարման սլանը
- Մոդելային ձևոճարկություններից յուրաքանչյուրի փորձագիտական ուղղորդումը

Մույն գնկույցը բաղկացած է միմյանց հետ սերտորեն շտկալված երեք մասերից, այն է՝ մասնավոր հատվածի զարգացման պլանից, նպատակային 3 ենթահատվածների զարգացման պլանից (ներառյալ ընդհանուր վերլուծությունն ու կառավարման ուղեցույցը) և մոդելային ձևոճարկության կառավարման բարելավման պլանից (ներառյալ մանրամասն փորձագիտական խորհրդատվությունը):

Նկ. 1.2.1-ում (տե՛ս հաջորդ Լջին) բերված է հետազոտության սխեմատիկ արսացույցը (ներառյալ փորձի փոխանցումը):



Նկ. 1.2.1 Հայաստանի մասնավոր հատվածի զարգացման մասին հետազոտության հայեցակարգային շրջանակը

1.3 Հետազոտության մեթոդաբանությունը


Վերոնշյալ կետ (2)-ում բերված նպատակներին հասնելու համար հետազոտական քիմը ձեռնարկել է դիագրամ 1.2.1-ում սխեմատիկ ձևով տրված հետազոտական աշխատանքները: Չատորոշվել և մակրո մոտեցմամբ վերլուծվել են տնտեսությանը, տնտեսական բաղաբաղանությունը, իրավական համակարգին, հարկային համակարգին, ֆինանսական համակարգին, ֆիզիկական և ոչ ֆիզիկական ենթակառուցվածքներին, ազգագրական միատուններին ու մարդկային ռեսուրսներին վերաբերող մակրո խնդիրները և վեր են հանվել վերջիններիս առաջացումը պայմանավորող արմատական գործոնները:

Մակրո հետազոտությանը զուգահեռ, նպատակային 3 ենթահատվածներում ընդհանուր առմամբ 36 ձեռնարկություն (դրանցից 29-ը նախանշվել էին «աշխատանքների շրջանակով», որոնց հետազոտության ընթացքում ավելացվել էր ևս 7 ձեռնարկություն) ենթարկվել է

ճեպագնման և հարցաբերիկային ուսումնասիրման, իսկ ճեպագնման սրբյունքում ընտրված ձեռնարկությունները դարձել են մանրամասն ստուգարձման առարկա և ստացել օժանդակություն կառավարման ասպարեզում: Այս միկրո մոտեցման միջոցով վեր են հանվել ձեռնարկությունների դիմակայած հիմնահարցերն ու խնդիրները: Արդյունքները հետո ի մի են բերվել և օգտագործվել տվյալ զևկույցը պատրաստելիս:

Քիմիական (դեզագործական) արդյունաբերության հատվածում չգտնվեց մոդելային ձեռնարկությունների համար սահմանված չափանիշներին բավարարող որևէ ձեռնարկություն, և հետագոստական քիմն առաջարկում է քննության առնել «Գեզագործական ամինոպրոունների արտադրության սխեման», որը ենթադրում է երկրում առկա խոստումնալից տեխնոլոգիայի կիրառումը:

Հայաստանի Հանրապետության ուրվագիրը	
(Անկախության օրը՝ սեպտեմբերի 23, 1991թ., նախագահական հանրապետություն, միասուրստ համակարգ (131 տնգում)	
Նախագահ՝ Ռոբերտ Քոչարյան, Վարչապետ՝ Վազգեն Սարգսյան	
1. Տեղադրությունը.	լայնություն՝ 40Ն, երկայնություն՝ 45 Է.
2. Տարածքը.	29800 քառ.կմ (Ճապոնիայի 1/13-րդը, ամենավարքը ՆեաՄ երկրների շարքում)
3. Սահմանակից երկրները.	արևելքում՝ Ադրբեջան, արևմուտքում՝ Թուրքիա, հարավում՝ Իրան, հյուսիսում՝ Վրաստան
4. Մայրաքաղաքը.	Երևան
5. Գլխավոր քաղաքները.	Գյումրի, Վանաձոր
6. Լանդշափտը.	վարելահող՝ 20%, արոտավայր՝ 20%, այլ՝ 60%
7. Կլիման.	լեռնացամաքային կլիմա
8. Պաշտոնական բնակչությունը.	3791,2 հազար (առ 1 հունվարի 1998թ.)
9. Համախառն ներքին արդյունքը.	1885 միլիոն ԱՄՆ դոլար (1998թ.)
10. Անկ շնչին ընկնող ՀՆԱ-ն.	\$497 (1998թ.)



Նկ. 1.2.1 Հայաստանի մասնավոր հատվածի զարգացման մասին հետազոտության հայեցակարգային շրջանակը

1.3 Հետազոտության մեթոդաբանությունը

Վերանշարժ կետ (2)-ում բերված նպատակներին հասնելու համար հետազոտական ընդ ձեռնարկել է դիտարկում 1.2.1-ում սխեմատիկ ձևով արված հետազոտական ուղիատարները: Չատորաշվել է մակրո մոտեցմամբ վերլուծվել են անտեսությամբ, անաստական բազարածիանությունը, իրափական համակարգին, հարկային համակարգին, ֆինանսական համակարգին, ֆիզիկական և ոչ ֆիզիկական ենթակառուցվածքներին, ազգագրական միասուններին ու մարդկային ռեսուրսներին վերաբերող մակրո խնդիրները և վեր են հանվել վերջիններիս առաջագոծը սրայմտնամարդ տրմատական գործունները:

Մակրո հետազոտությանը զուգահեռ, նպատակային 3 ենթահատվածներում րեզիստոր տրմամբ 36 ձեռնարկարյուն (դրանցից 29-ը նախանշվել էին «աշխատունիների շրջանակով», որոնց հետազոտության ընթացքում ավելացվել էր եւ 7 ձեռնարկարյուն) ենթարկվել է

Գլուխ 2

Սոցիալական տնտեսության
պայմանները և խնդիրները

2. Սոցիալական տնտեսության պայմանները և խնդիրները


2.1. Սոցիալական տնտեսության պայմանները

- Հայ ժողովուրդը, 1988 – 1994թթ. դիմակայելով աննախադեպ դժվարությունների մի ծանր շրջանի, կարողացել է հասնել հարաբերական մակրոտնտեսական կայունության, թեպետև 1998թ. ՀՆԱ-ն կազմել է 1990-ի մակարդակի 61,7%-ը:
- Վերջին 5 տարիների տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել գյուղատնտեսության (գլխավորապես՝ հողագործության) և առևտրի առաջընթացով, մինչդեռ արդյունաբերական հատվածը 1992թ. շեշտակի անկումից ի վեր գտնվում է լճացման վիճակում:
- Հայաստանի ՀՆԱ-ի կառուցվածքը, համաձայն Սիացյալ Ազգերի դասակարգման, 1988-1998թթ. ընթացքում ենթարկվել է կտրուկ փոփոխության, և առաջնային, երկրորդային ու երրորդային արտադրանքների բաժինը կազմել է համապատասխանաբար 33,2%, 27,1% (արդյունաբերությունը՝ 18%) և 39,7%:
- Ֆինանսական դեֆիցիտի և խոշոր առևտրային դեֆիցիտի կրճատման խնդիրը պետք է գտնվի կառավարության ու շահութային կիզակենտրոնում:

2.1.1. Մակրոտնտեսական իրավիճակը

- Հայաստանի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 1994թ. մայիսից, երբ Ադրբեջանի նեո ստորագրվեց սրայմանագիր գինադադարի մասին, անընդմեջ առաջընթաց է արձանագրում՝ միջին հաշվով ապահովելով տարեկան 5,6%-ի իրական աճ (տե՛ս նկ. 2.1.1.1):

Կարելի է ասել, որ Հայաստանի այս սահուն տնտեսական վերելքը հանդիսանում է հայկական կառավարության ու ժողովրդի գործադրած միասնական ջանքերի և ԱՄՆ-ի, ՀԲ-ի, նվիրատու երկրների և այլոց բազմաբնույթ ֆինանսական ու փորձագիտական աջակցության համադրման արդյունքը:



(Աղբյուրը՝ Վիճակագրության, պետական ռեզիստրի և վերրուծության նախարարություն)

Նկ. 2.1.1.1 Իրական ՀՆԱ-ի դինամիկան

Անցած 5 տարիներին տնտեսությունը 1993թ. նկատմամբ բնդիանոր առմամբ իրապես աճել է ավելի քան 1,3 անգամ. բայց և այնպես, վերջին տարիների այդ տնտեսական առաջընթացի արդյունքում ՀՆԱ-ն 1998թ. կազմել է 1990-ի մակարդակի բնդամենը 61,7%-ը (տե՛ս նկ. 2.1.1.1):

Հայաստանի ՀՆԱ-ն 1998թ. կազմել է 1885 միլիոն ԱՄՆ դոլար (951900 միլիոն դրամ), իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն (ելնելով ազգաբնակչության պաշտոնական քվարանակից)՝ 497 դոլար: Չմայած տեղ գտած փոփոխություններին, Հայաստանի տնտեսական վիճակը շարունակում է մնալ դժվարին:


1994թ. սկիզբ առած տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել գյուղատնտեսության և առևտրի զարգացմամբ:

- Արդյունաբերական հատվածը դեռևս գտնվում է լճացման վիճակում:

Հայաստանի արդյունաբերական արտադրությունն այդպես էլ չի վերականգնվել մինչ 1993թ. տեղի ունեցած խիստ անկումից հետո, ինչպես ցույց է տրված նկ. 2.1.1.2-ում:

Արտահանումը Ռուսաստան 1998թ. օգոստոսից սկսած նվազում է, և այդ երկրի տնտեսական ճգնաժամն արտադրության մի նոր անկման պատճառ է դարձել, քանի որ հայկական ձեռնարկությունները չունեն փոխարինող շուկաներ:

Արդյունաբերական արտադրանքը (ներառյալ էլեկտրաէներգիան) 1998թ. համարժեք էր 1990թ. մակարդակի 46%-ին և 1988-ի՝ 38,7%-ին: Հսկա պետական ձեռնարկություններից և սեփականաշնորհված երբեմնի առանցքային ձեռնարկություններից շատերը ներկայումս կան մատնված են անգործության, կան էլ գործում են բերի ծանրաբեռնվածությամբ, և դրանց զգալի մասը չունի վերականգնման որևէ հեռանկար:




(Աղբյուրը՝ Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն)

Նկ. 2.1.1.2 Արդյունաբերական արտադրանքի դինամիկան

- ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ տնտեսության հատվածների 1990թ. ի վեր ենթարկվել է էական փոփոխությունների (տե՛ս հաջորդ էջում զետեղված նկար 2.1.1.3-ը): Ինչպես երևում է դիագրամից, առաջնային արտադրանքի (գյուղատնտեսություն / անտառային տնտեսություն / ձկնորսություն – Հայաստանի պարագային, ըստ էության, միայն գյուղատնտեսություն) բաժինը երկրի ՀՆԱ-ում աճել է ավելի քան 2,6 անգամ՝ 1990-ի 12,5%-ից 1998թ. հասնելով 33,2%-ի: Սխեմայն ժամանակ, երկրորդային արտադրանքի

(արդյունաբերություն, շինարարություն) բաժինը մոտ կիսով չափ կլուճառվել է՝ 62,5%-ի փոխարեն կազմելով 32,5%:



(Աղբյուրը՝ նույնը, ինչ նկ. 2.1.1.1-ի դեպքում)

Նկ. 2.1.1.3 ՀՆԱ-ում առանձին հատվածների բաժնեմասի փոփոխությունը

Արդյունաբերական արտադրանքը 1998թ. կազմել է 260,1 միլիարդ դրամ (515 միլիոն ԱՄՆ դոլար, փոխարկած ըստ միջին տարեկան ստանդարտ փոխարժեքի՝ 1 ԱՄՆ դոլար = 504,87 դրամ), այսինքն՝ ՀՆԱ-ի 23,4%-ը:

Գյուղատնտեսական արտադրանքը նույն տարում անցած տարվա համեմատ աճել է 13,1%-ով՝ հիմնականում շնորհիվ բարենպաստ եղանակով պայմանավորված լավ բերքի, և 1998թ. կազմել է 402,1 միլիարդ դրամ (796 միլիոն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 33,2%-ը: 1993թ. սկսած գյուղատնտեսությունը Հայաստանի ՀՆԱ-ի կառուցվածքում ունի ամենամեծ բաժինը:

Երրորդային արտադրանքների բաժինը 25%-ից հասել է 34,3%-ի՝ ի արդյունք առևտրային ու ռեստորանային գործունեության և այլնի ընդլայնման:

1988թ. ի վեր տարբեր պատմական դժվարությունների ճաշակած Հայաստանում տնտեսությունն արագորեն շրջվել է գյուղատնտեսության և առևտրի կողմը՝ ի հետևանք արդյունաբերության համարյա րե լիակատար քայքայման:

340 միլիոն ԱՄՆ դոլար կազմող համախառն արդյունաբերական արտադրանքը (չհաշված էլեկտրաէներգիան) համարժեք է շուրջ 600 աշխատող ունեցող ճապոնական միջին չափերի հաստոցաշինական ձեռնարկության արտադրանքին, և վերոնշյալ ցուցանիշները վկայում են այն մասին, որ ներկա Հայաստանը նախկին արդյունաբերական երկրից վեր է ածվել ցածր արտադրողականությանը գյուղատնտեսական երկրի:

- Հայաստանն ԱՊՀ երկրներից առավելագույնս ենթարկվեց գերադաճի ազդեցությանը:

Սպառողական գների համաթիվը (ՍԳՀ) 5 տարում՝ 1990-ից մինչև 1995թ. աճեց 41800 անգամ, իսկ արտադրական գների համաթիվը (ԱԳՀ)՝ 31244 անգամ. 1998թ. ՍԳՀ-ը կազմեց 108,45%, ե ԱԳՀ-ը՝ 113,4%, չնայած Ռուսաստանի տնտեսական ճգնաժամին:

Աղյուսակ 2.1.1.1 ՍԳՀ-ի և ԱԳՀ-ի դինամիկան (միավորը՝ անգամ)

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998
ՍԳՀ	2,2	10,5	9,9	48,1	3,8	1,22	1,19	1,084
1990թ. նկատմամբ	2,2	23	229	11000	41800	50996	60685	65782
ԱԳՀ	2,2	10,5	9,9	50,6	2,7	1,19	1,14	1,134
1990թ. նկատմամբ	2,2	23	229	11572	31244	37180	42385	48064

(Աղբյուրը՝ Վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարություն)

- Ինչ վերաբերում է 1998թ. ֆինանսական բյուջեին, ապա եկամուտների կազմել են 165 միլիարդ, իսկ ծախսերը՝ 205,2 միլիարդ դրամ, գոյացնելով 40,2 միլիարդ դրամի (79 միլիոն ԱՄՆ դոլարի) ֆինանսական դեֆիցիտ, թեպետև Հայաստանը ԱՄՀ-ի ուղենշմամբ իրականացնում էր միանգամայն կոշտ բյուջետային քաղաքականություն:

Հայաստանի ֆինանսական դեֆիցիտը 1998թ. արտահայտվում էր եկամուտների նկատմամբ 24,3% պակասորդով, ինչը համապատասխանում էր ՀՆԱ-ի 4,2%-ին: Ի նկատի առնելով պետական բյուջեի չափը և հարկային եկամուտների ապագա նշանակալի աճի շնորհիվ դեֆիցիտը վերացնելու խիստ սահմանափակ հնարավորությունը, ֆինանսական դեֆիցիտի այս գումարը Հայաստանի նման երկրի համար պետք է համարել հսկայական:

Բյուջեի պակասորդը ծածկելու նպատակով կառավարությունը 1997թ. բողոքկում էր զանազան պետական կարճաժամկետ պարտատոմսեր (ՊՎՊ)՝ 1-ից 12 ամիս տևողությամբ և տարեկան 31,5-81,2% եկամտաբերությամբ (միջին տարեկան եկամտաբերությունը եղել է 53,3%): Թողարկման ամսական ծավալը տատանվել է 1-ից մինչև 4,5 միլիարդ դրամի սահմաններում, իսկ տարեկան գումարը կազմել է 37,2 միլիարդ: ՊՎՊ-երի բողոքկումը շարունակվել է նաև 1998թ.՝ 31,5-63,9% տարեկան եկամտաբերությամբ (միջին եկամտաբերությունը հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի համար կազմել է 44,5%):

Բարձր եկամտաբերություն ունեցող այս սլարտատոմսերի բողոքկման հետևանքով ֆինանսական դեֆիցիտն ամեն տարի մեծանում է շուրջ 20 միլիոն ԱՄՆ դոլարով:

Ֆինանսական դեֆիցիտի շեշտակի կրճատումը պետք է հանդիսանա Հայաստանի կառավարության սուսցնահերթ խնդիրը:

- Հայաստանի ընթացիկ հաշվի հաշվեկշիռը վկայում է մնայուն կառուցվածքային դեֆիցիտի մասին, որի պատճառը առևտրի հաշվեկշռի հսկայական դեֆիցիտն է:

Առևտրի հաշվեկշիռը 1995~1998թթ. բերվում է աղյուսակ 2.1.1.2-ում:

Աղյուսակ 2.1.1.2 Հայաստանի առևտրի հաշվեկշիռը (միլիոն ԱՄՆ դոլար)

	1995		1996		1997		1998	
	Ընդամ.	(ԱՊՀ)	Ընդամ.	(ԱՊՀ)	Ընդամ.	(ԱՊՀ)	Ընդամ.	(ԱՊՀ)
Արտահանում	271	170	290	128	233	95	223,4	85,1
Ներմուծում	674	334	856	278	893	300	895,7	221,2
Հաշվեկշիռը	-403	-164	-566	-150	-660	-205	-672,3	-136,1

(Աղբյուրը՝ ճույնը, ինչ աղյուսակ 2.1.1.1-ի դեպքում)

Ինչպես երևում է աղյուսակից, Հայաստանն առևտրի մեծ դեֆիցիտ ունի ինչպես ո՛չ ԱՊՀ, այնպես էլ ԱՊՀ անդամ երկրների հետ: Առևտրի հաշվեկշռի դեֆիցիտի մեծությունը 1998թ. (672,3 միլիոն ԱՄՆ դոլար) համապատասխանում էր Հայաստանի ՀՆԱ-ի 35,7%-ին: Սա վերջնական դեֆիցիտ է, երբ նկատի ունենանք Հայաստանի տնտեսության չափը:

Անցած տարվա աշնանից ի վեր դեպի ԱՊՀ երկրներ արտահանման անընդմեջ նվազումը կապվում է Ռուսաստանում տնտեսական ճգնաժամի հետ, սակայն այն հիմնականում պայմանավորված է նրանով, որ որակի, զնի և/կամ ատարման առումով հայկական սպարանքերը միջազգայնորեն մրցունակ չեն:

Պետք է մատնանշել, որ Հայաստանի տնտեսության վերակառուցման սնունդը ինչ առևտրի հաշվեկշռի բարելավումը, ֆինանսական դեֆիցիտի կրճատման հետ մեկտեղ, հանդիսանում է խոշորագույն հիմնահարցերից մեկը:

Առևտրի հաշվեկշռի մշտական դեֆիցիտը կազմում է ընթացիկ հաշվի հաշվեկշռի դեֆիցիտի գլխավոր պատճառը, իսկ արտաքին փոխառություններն ուղղվում են ծածկելու Հայաստանի միջազգային վճարումների հաշվեկշիռը:

- Ի հետևանք, արտաքին պարտքի մնացորդը 1998թ. վերջին հասել է 801 միլիոն ԱՄՆ դոլարի, ինչը համապատասխանում է ՀՆԱ-ի 43%-ին: 1999թ. ևս գոյություն չունի արտաքին պարտքը նվազեցնելու որևէ իրական հեռանկար:

- Համախառն միջազգային պահուստը 1998թ. վերջին կազմել է 309 միլիոն ԱՄՆ դոլար, անցած տարվա համեմատ աճելով 18 միլիոնով և առաջին անգամ հատելով 300 միլիոն ԱՄՆ դոլարի սահմանը: Սակայն, պաշտոնական միջազգային գուտ պահուստը՝ գոմար, որը հաշվարկվում է որպես համախառն միջազգային պահուստի և վճարման ենթակա պարտքերի տարբերություն՝ եղել է 99,5 միլիոն ԱՄՆ դոլար:

- Հայաստանն իր սեփական արժույթը՝ դրամը ներ է դրել 1993թ. նոյեմբերին:

Դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ բնութագրվում է հարաբերական կայունությամբ: Ռուսական ուրվիկն 1998թ. արժուրսվարկային ճգնաժամից հետո կորցրել է իր արժեքի մոտ երեք քառորդը, այնինչ դրամի փոխարժեքը դեռ հեռու է նման անկումից:

Հայաստանի Կենտրոնական բանկը կարևոր դեր է խաղում վերջին տարիներին երկրում արժույթի համեմատական կայունություն ապահովելու գործում, մասնավորապես՝ խիստ հսկողության տակ սրահելով դրամական զանգվածը:

Դրամի փոխարժեքի կայունությունը բացատրող մեկ այլ պատճառ կարող է լինել Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Եվրոպայում և այլուր բնակվող հայերի դրամական փոխանցումների շնորհիվ ԱՄՆ դոլարների անընդմեջ հոսքը հայկական շուկա (տարեկան մոտավորապես 150-200 միլիոն), ինչպես նաև դոլարի լայն և ընդգրկուն տարածումը Հայաստանի տնտեսությունում: Ի դեպ, Ռուսաստանից դրամական փոխանցումների ծավալը 1999թ. սկսած Լաևանորեն նվազել է:

Շրջանառության մեջ դրամական բաղադրիչները երկու տարվա ընթացքում, 1996թ. սեպտեմբերից մինչև 1998թ. վերջերը, աճել են ընդամենը 20%-ով՝ 30,3 միլիարդ դրամից հասնելով 36,4 միլիարդի:


Դրամական զանգվածի խիստ վերահսկողությունը, որ իրականացվում է Կենտրոնական բանկի կողմից, իր դրական ներգործությունն է ունեցել գների կայունացման վրա:

Վերը նշված ժամանակահատվածում M2-ը (Փ2-ը՝ լայնիմաստ փողը) մշտապես ավելացել է, և 1998թ. սեպտեմբերին այն առաջին անգամ հասեց ԱՄՆ 100 միլիոն դոլարի սահմանը՝ հասնելով 53,7 միլիարդ դրամի (106 միլիոն դոլար):

M2-ի նշված ավելացման հիմնական պատճառը եղել է ԱՄՆ դոլարով ավանդույթների 3,2 անգամ աճը:

ԱՄՆ դոլարով ավանդույթների մնացորդը 1998թ. սեպտեմբերի վերջին կազմել է 75 միլիոն:

Քաջ հայտնի փաստ է, որ տնտեսիկն տնտեսություններում առկա է կանխիկ ԱՄՆ դոլարների զգալի պաշար, որը նրանք չեն վատահում ֆինանսական



(Աղբյուրը՝ պատրաստված է ԿԲ-ի տվյալների հիման վրա)

Նկ. 2.1.1.4 Դրամական բաղադրիչները և M2-ը

հաստատություններին, և որ բնակարանային

գործարքները 100%-ով կատարվում են ԱՄՆ դոլարով:

Վերոշարադրյալը վկայում է հայկական տնտեսության որոշակի դրսևացման մասին:

- **Գործազուրկների թիվը** 1998թ. դեկտեմբերի վերջին կազմել է 139,1 հազար, իսկ **գործազրկության պաշտոնական մակարդակը՝ 9,3%**, ինչը 3,2 կետով փոքր է անցած տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Այդ թիվը 1999թ. ապրիլի 1-ին հասել է 159,7 հազարի, իսկ պաշտոնական **գործազրկության մակարդակը՝ 10,5%-ի**, այսինքն աճել է 1,2 կետով:

Գործազրկության ամենաբարձր մակարդակ ունեցող մարզերն են Շիրակը (20,6%) և Լոռին (14,7%)՝ երկրաշարժի գոտում, և Սյունիքը՝ Հայաստանի հարավում: Այս մարզերում աշխատունակ բնակչության տեսակարար կշիռը (տնտեսապես ակտիվ բնակչության 65-68%-ը) ի սկզբանե գնահատված է եղել երկրի միջինից ցածր: Հետևաբար, իրապես գործազուրկների թիվը և գործազրկության մակարդակն այստեղ պետք է որ միանգամայն ավելի բարձր լինեն, քան հետևում է պաշտոնական տվյալներից:

- Ազգային եկամուտը 1998թ. նախորդ տարվա համեմատ աճել է 7,7%-ով, և տնային տնտեսության միջին ամսական եկամուտը կազմել է մեկ ընտանիքի հաշվով 55094 դրամ (109 ԱՄՆ դոլար): Համաձայն Վիճակագրության նախարարության կողմից 1000 ընտանիքների՝ որպես **տնային տնտեսություն** ունեցած **եկամուտների** ուսումնասիրման ճանապարհով ձեռք բերված տվյալների, աշխատավարձից եկամուտը կազմում է համախառն եկամտի միայն 1/4-1/5 մասը (նապոյնիայում համախառն եկամուտը 94%-ով բաղկացած է աշխատավարձից), իսկ տրանսֆերտից զոչացող եկամուտը համարյա թե համարժեք է աշխատավարձին: Սա նշանակում է, որ մարդիկ ապրուստ են առեղծում՝ աշխատավարձային եկամտի սրկաստորդը ծածկելով զանազան այլ միջոցներով, ինչպիսիք են արտասահմանից դրամական փոխանցումները, սեփական գույքի վաճառքը և այլն: Սա միանգամայն բնութագրական երևույթ է Հայաստանի համար:

- **Սեփականաշնորհումը** Հայաստանում ընդհանուր առմամբ հաջող է իրականացվել:

Սեփականաշնորհումը գյուղատնտեսական հատվածում վազ է սկսվել, և արդեն իսկ սեփականաշնորհված է գյուղատնտեսական հոգատարածքի ավելի քան 95%-ը:

Սեփականաշնորհվել է 1875 պետական ձեռնարկություն, հիմնականում՝ արդյունաբերական հատվածում: Սեփականաշնորհման առաջընթացը 1999թ. հունվարի 1-ի դրությամբ բերված է աղյուսակ 2.1.1.3-ում: Ինչպես ցույց է տրված աղյուսակում, 1460 ձեռնարկությունների 70%-ը սեփականաշնորհվել է հավաստագրերով (վաուչերներով):

7 ձեռնարկություններ վաճառվել են օտարերկրյա ընկերություններին, այդ թվում «Ալմենտեյ»-ը (հունական OTE ընկերությանը), Երևանի կոնյակի գործարանը

(Ֆրանսիական Pernot-Ricard ընկերությանը), «Արմենիա» հյուրանոցը, «ԱՆԻ» հյուրանոցը և 3 այլ պետական ձեռնարկություններ:

Աղյուսակ 2.1.1.3 Ձեռնարկությունների սեփականաշնորհումը առ 01.01.1999թ.

Սեփականաշնորհման ձևը	Ձեռնարկ. քիվը	Սեփակա-նաշնորհ-ված	Այլ		
			Ընթաց-քում	Չախող-ված (1-ին անգամ)	Չախող-ված (3-րդ անգամ)
Բաց բաժնետիրական ընկեր.	1319	1085	29	202	3
Հավաստագրով	1251	1023	29	196	3
Աճուրդով	68	62	0	6	0
Փակ բաժնետիրական ընկեր.	142	129	1	12	0
Վարձակալին զույքի վաճառք	184	178	2	4	0
Աճուրդ	35	16	0	16	3
Մրցույթ	154	45	4	57	48
Միջազգային մրցույթ	18	7	0	11	0
Լուծարում	23	-	-	-	-
ԸՆԴՀԱՆՆԵՐ	1875	1460	36	302	54

- Ներդրումները շինարարությունում 1998թ. կազմել են 75,67 միլիարդ դրամ (մոտ 150 միլիոն ԱՄՆ դոլար), ինչը 17,5%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Դրա 44%-ը, կամ 33,29 միլիարդ դրամ (մոտ 66 միլիոն ԱՄՆ դոլար), ներդրվել է մասնավոր բնակարանաշինության մեջ:

- Բեռնափոխադրումների տարեկան ծավալը 1998թ. կազմել է 13887 հազար տոննա, այսինքն՝ 3%-ով (ըստ տոննա-կմ-ի՝ 5,4%-ով) ավելի, քան անցած տարի: Աղյուսակ 2.1.1.4-ում բերված է բեռնաշրջանառության բաշխումն ըստ փոխադրամիջոցների:

Աղյուսակ 2.1.1.4 Բեռնափոխադրումները 1998թ. (միավորը՝ հազ.տ.)

Փոխադրամիջոցը	1998թ.	1997-ի համեմ. (%)
Բնդիւսնուր բեռնափոխադրումները	13887	103,0
Նրկարույի	1731	117,6
Ավտոմեքենա	11087	101,0
Օդանավ	19	71,3
Խողովակաշար	1050	103,8

(Աղբյուրը՝ նույնը, ինչ աղյուսակ 2.1.1.1-ի դեպքում)

Ի հետևանք շրջափակման, Հայաստանում բեռնափոխադրումների 80%-ը կատարվում է ճանապարհային փոխադրամիջոցներով: Միևնույն ժամանակ, երկարուղային փոխադրումները 1998թ. ավելացել են, մինչդեռ օդային փոխադրումները մեծ անկում են ապրել:

2.1.2 Արդյունաբերական հատվածի պայմանները

(1) Ընդհանրագիրը

 ապահովումն է, և այս առումով կառավարությունն ու մասնավոր հատվածը պետք է ձեռք
 առնեն և գործի դնեն բոլոր հնարավոր միջոցները:

(4) Զբաղվածությունը

Հայաստանի տնտեսական կառուցվածքում տեղ գտած կտրուկ փոփոխությունները,
 որոնց մասին խոսվել է 2.1.1-ում, իրենց հերթին խոշոր փոփոխությունների են հանգեցրել
 զբաղվածության կառուցվածքում: Աղյուսակ 2.2.1.7-ում տրված են զբաղվածների՝ ըստ
 հատվածների բաշխման փոփոխությունները:


Աղյուսակ 2.2.1.7 Զբաղվածների հատվածային բաշխման փոփոխությունը

	1990	1992	1996	1997
Գյուղատնտեսություն	17,4	30,7	40,6	41,1
Արդյունաբերություն	30,4	25,7	17,8	16,7
Շինարարություն	11,3	8,6	4,7	4,4
Տրանսպորտ/հաղորդակցություն	5,2	4,2	3,3	3,6
Առևտուր/դեստոգրաններ	6,2	4,7	7,7	8,4
Կրթություն, մշակույթ	12,0	11,1	12,1	11,8
Այլ	17,5	15,0	13,8	14,0

(Աղբյուրը՝ Նույնը, ինչ աղյուսակ 2.2.1.2-ի դեպքում)

Ել է մտա 2,4 անգամ՝ 1990թ. 17,4%-ից 1998-ին հասնելով 41,7%-ի, մինչդեռ երկրորդային արտադրանքների հատվածի (արդյունաբերություն, շինարարություն) բաժինը նույն ժամանակահատվածում 41,7%-ից նվազել 21,1%-ի: Ինչ վերաբերում է երրորդային հատվածին, ապա այստեղ ընդհանուր առմամբ արձանագրվել է բեկակի հետընթաց, ընդ որում առևտրա-ռեստորանային ենթահատվածն աճել է, իսկ արանսպորտն ու հաղորդակցությունն անկում են ապրել:

Նկար 2.2.1.2-ում պատկերված է զբաղվածների համեմատական բաշխումն ըստ հատվածների 1997 և 1990թթ.:



(Աղբյուրը՝ Վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարություն)

Նկար 2.2.1.2 Չբաղվածների հատվածային բաշխման փոփոխությունը

Չբաղվածների թիվն արդյունաբերական հատվածում 1990թ. 495 հազարի փոխարեն 1997թ. կազմեց ընդամենը 229 հազար, իսկ 1998-ին կրճատվեց եւ 7,8%-ով (տե՛ս աղյուսակ 2.2.1.8):

Աղյուսակ 2.2.1.8 Չբաղվածության անկումն արդյունաբերական հատվածում (միավոր՝ հազար)

	1990	1992	1994	1997	1998
Չբաղվածների թիվը	494,8	405,2	355,2	228,9	211,0


(Աղբյուրը՝ նույնը, ինչ աղյուսակ 2.2.1.2-ինը)

1998թ. վերջի դրությամբ գործազրկության պաշտոնական ցուցանիշը, որ 9,3% է, ինքնընտանիքային չի արտացոլում զբաղվածության և գործազրկության իրական պատկերը, քանի որ այդ ցուցանիշը հաշվարկվել է՝ գրանցված գործազուրկների թիվը (139,1 հազար) բաժանելով տնտեսապես ակտիվ սուզարնակչության պաշտոնական թվին (1998թ. դեկտեմբերի զնահատականը՝ 1490 հազար):

Գործազուրկների վերը նշված վիճակագրությունը չի ներառել մոտ 90 հազար

Եւ Լ մոտ 2,4 անգամ՝ 1990թ. 17,4%-ից 1998-ին հասնելով 41,7%-ի, ճինչդեռ երկրորդային արտադրածրուղերի հատվածի (արդյունաբերություն, շինարարություն) բաժինը նույն ժամանակահատվածում 41,7%-ից նվազել 21,1%-ի: Ինչ վերաբերում է երրորդային հատվածին, ապա այստեղ բնդիանուր տաժամբ արձանագրվել է րեբեսկի հեադերաց, բնդ որում առևարա-ռևատորանային ենրուհատվածն աճել է, իսկ արանաարարան ու հաղորդակցությունն անկում են ապրել:

Նկար 2.2.1.2-ում պատկերված է գրաղվածների համեմատական բաշխումն լատ հատվածների 1997 և 1990թթ.:



(Աղբյուրը՝ Վիճակագրության, պեստական ռեգիստրի և վերլուծության նախարարություն)

Նկար 2.2.1.2. Զբաղվածների հատվածային բաշխման փոփոխությունը

Զբաղվածների թիվն արդյունաբերական հատվածում 1990թ. 495 հազարի փոխարեն 1997թ. կազմել բնդամենր 229 հազար, իսկ 1998-ին կրճատվել ա 7,8%-ով (անհ աղյուսակ 2.2.1.8):

Աղյուսակ 2.2.1.8. Զբաղվածության անկումն արդյունաբերական հատվածում (միալար՝ հազար)

	1990	1992	1994	1997	1998
Զբաղվածների թիվը	494.8	405.2	355.2	228.9	211.0

(Աղբյուրը՝ Նույնը, ինչ աղյուսակ 2.2.1.2-ինը)

1998թ. վեբչի դրադամբ գորժագրկության սրաշտոնական ցուցանիշը, որ 9,3% է, ինբրատինբյան չի աբաաացուրում գրաղվածության և գորժագրկության իրական սրաավերը, բանի որ այդ ցուցանիշը հաշվարկվել է՝ գրանցված գորժագրկների թիվը (139.1 հազար) բաժանելով աճոտեսաայես ախաիվ ազգարնակչության սրաշտոնական թիվն (1998թ. դեկտեմբերի գնահատականը՝ 1490 հազար):

Գորժագրկների վեբը նշված վիճակագրությունը չի ներառել մոտ 90 հազար

աշխատողների, որոնք ձեռնարկություններից ուղարկվել են հարկադիր տևական արձակուրդի:

Նաև, «Ջրաղվաժուրյան մասին» նոր օրենքի ներքո գործազուրկ ճանաչվելու համար պետք է նախքան այդ 1 տարի աշխատած լինել: Մույն ձևական կողմում բերանալու դեպքում գործազուրկը հայտնվում է ծանր պայմաններում, այդ թվում զրկվելով գործազուրկի իր կարգավիճակից: Ուստի, միշտ էլ առկա է «ճեղքվածք» գործազուրկների փաստացի թվի և գրանցված գործազուրկների թվի միջև, ինչն արտացոլված չէ վիճակագրությունում:

Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանությամբ գործազրկության մակարդակի վիճակագրություն Հայաստանում չի կիրարկվում, իսկ միջազգայնորեն ընդունելի մեթոդներով հաշվարկումներն այնքան էլ հստակ չեն: ՄԱԶԾ-ի 1998թ. զեկույցում նշվում է, որ գործազրկության իրական մակարդակը կազմում է 25 – 28%: Որոշ հայ փորձագետներ նույնպես այն կարծիքն են հայտնում, որ ցուցանիշը ստատանվում է 25-ից 30%-ի միջակայքում:

Կան իրական գործազրկության (այդ թվում՝ պոտենցիալ գործազուրկների թվի) գնահատման տարրեր եղանակներ, սակայն վկայակոչման առումով օգտակար կլինի դիմել գնահատման այն մեթոդաբանությանը, որը հիմնված է ՀՆԱ-ի և զբաղվածների թվաքանակի գուգակապի (կորելացիայի) վրա: Մեկ աշխատողի հաշվով արտադրողականությունը ժամանակագրորեն աճում է, բայց եթե տվյալ նպատակով ընդունենք, որ այդ ցուցանիշը, ինչպես նաև աշխատավարձն ու մյուս արտադրական գործոնները մնում են անփոփոխ, ապա հնարավոր է սահմանել գուգակապ տնտեսությունում զբաղվածների թվաքանակի և ՀՆԱ-ի մակարդակի միջև:

Այլ խոսքերով ասած, եթե զբաղվածների թվաքանակն ավելանում է, ապա միևնույն համամասնությամբ աճում է նաև ՀՆԱ-ն: Եվ հակառակը, զբաղվածների թվաքանակի նվազմանը համընթաց անկում է ապրում նաև ՀՆԱ-ն: Ելնելով այս ենթափարկածից, կարելի է բանաձևել «Ջրաղվածների թվաքանակի աճի կամ նվազման տեմպ = ՀՆԱ-ի աճի կամ նվազման տեմպ» հավասարումը: Ընդունելով, որ մեկ աշխատողի արտադրողականությունը 1998թ. նույնն է, ինչ 1990-ին, և կիրառելով 61,7%-ը, ինչը 1998թ. ՀՆԱ-ի համամասնությունն է 1990-ի ՀՆԱ-ի նկատմամբ, կարող ենք հաշվարկել աշխատողների պահանջվող քանակն ըստ հատվածների և արդյունքները համեմատել տվյալ հատվածում զբաղվածների փաստացի թվաքանակի հետ:

Աղյուսակ 2.2.1.9-ի Ա-ից Չ գլխատատերը նշանակում են հետևյալը.

Ա = 1990թ. ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ հատվածների.

Բ = 1998թ. ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ հատվածների.

Գ = 1990թ. զբաղվածների բանակն ըստ հատվածների.

Դ = 1997թ. զբաղվածների բանակն ըստ հատվածների (1998-ի համար տվյալները բացակայում են).

Ե = 1630 հազար x Բ.

Չ = Դ - Ե (զբաղվածների ավելցուկ/սակասորդ):

Աղյուսակ 2.2.1.9 Գերզբաղվածության գնահատականը՝ հիմնված ՀՆԱ-ի վրա
(միավորը՝ հազար մարդ)

	ՀՆԱ (%)		Զբաղվածներ		Պահանջվող բանակը 1998-ին	Ավելցուկ/ սակասորդը
	1990	1998	1990	1997		
	Ա	Բ	Գ.	Դ.	Ե	Չ
Գյուղատնտեսություն	12,5	20,5	284	612	334	278
Արդյունաբերություն	44,5	14,4	495	249	235	14
Շինարարություն	18	5,6	184	66	91	-25
Տրանսպորտ/հաղորդակցութ.	5,1	3,4	85	54	55	-1
Առևտուր, ռեստորաններ	4,1	5,7	101	125	93	32
Կրթություն, մշակույթ	3,5	1,4	196	176	23	153
Այլ	12,3	10,7	285	208	174	34
Ընդամենը	100%	61,7%	1630	1490	1,006	484

(Աղբյուրը՝ հաշվարկված է, ելնելով վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարության տվյալներից)

Համաձայն վերը բերված հաշվարկի, 1998թ. ՀՆԱ-ի մակարդակին համաչափ զբաղվածների թվաքանակը կազմում է 1006 հազար, ուստի գոյություն ունի աշխատուժի՝ 484 հազարի հասնող ավելցուկ, ներառյալ 278 հազար՝ գյուղատնտեսական հատվածում, և 153 հազար՝ կրթության ու մշակույթի բնագավառում: Սա համարժեք է 1997թ. զբաղվածների ընդհանուր թվաքանակի 32,5%-ին: Նման իրավիճակից հետևում է, որ առկա է ազգաբնակչության՝ 2.1.2-ում նկարագրված արտառիտի մշտական ազդակ:

2.2.2. Կառավարության տնտեսական քաղաքականությունը

(1) Արդյունաբերական քաղաքականությունը

Երև մի կողմ բողոքներ ստանձին դեպքերում կառավարության ձեռնարկած մասնավոր միջոցառումները և միջազգային գործակալությունների կողմից իրականացվող աջակցման ծրագրերը, սակայն կարելի է ասել, որ կառավարությունը չունի մշակված համակողմանի արդյունաբերական քաղաքականություն՝ ուղղված արդյունաբերության ընթացիկ և ապագա զարգացման պլանավորմանը: Արդյունաբերության և առևտրի նախարարության (հետագայում՝ ԱԱՆ) շատ պաշտոնյաների և արդյունաբերական քաղաքականության բաժնի պետի հետ վարած հարցազրույցների ընթացքում հետազոտող քիմիկն այդպես էլ չհաջողվեց ձեռք բերել տեղեկություններ արդյունաբերական քաղաքականության հնարավոր գերակայությունների կամ ընդհանուր ուղղության մասին:

Կամ մի շարք սրտնառներ, քե ինչու՝ կառավարությունը, շեշտադրում անելով անկում ապրող արդյունաբերության և զբաղվածության անհանգստացնող խնդիրների վրա, այնքան էլ եռանդուն չի գտնվել արդյունաբերական քաղաքականության սահմանման գործում:

- Կառավարությունը մտազբաղ էր անմիջական ու դժվարին հիմնահարցերով և իրեն չէր կարող քույլ տալ նման քաղաքականության մասին մտածելու «չքեղությունը»:
- Առաջնություն էր տրվում շուկայական տնտեսությանն անցնելու հենքի ստեղծմանը, օրինակ՝ տնտեսության կայունացմանն ու սեփականաշնորհմանը, ինչպես նաև իրավական համակարգի կայացմանը:
- ԽՍՀՄ ժամանակաշրջանի «պլանավորման» հանդեպ եղած հակազդումն առաջ բերեց «շուկայի՝ որպես համադարձանի» ծայրահեղ սինդրոմը: Այլ կերպ ասած, կառավարության շատ երիտասարդ տեխնոկրատների միտքը ներթմվել է այն գերիշխող գաղափարով, քե շուկան ի՞նքը պետք է որոշի այս կամ այն ճյուղի ունեցած արժեքն ու նշանակությունը և բնավ պետք չէ, որ կառավարությունը միջամտի գործընթացին՝ խթանելով որևիցե ճյուղի զարգացումը:
- ԱԱՆ-ում, որը ԽՍՀՄ-ի ժամանակ ճյուղերի արտադրական պլանների համար պատասխանատու մի քանի նախարարությունների հավաքածու է, չկան միջազգային տեսածիրով ու գիտելիքներով օժտված մասնագետներ քաղաքականության պլանավորման բնագավառում:

ԽՍՀՄ փլուզումը բերեց արտադրության կազմալուծմանը ո՛չ միայն Հայաստանում, այլև բոլոր նորանկախ հանրապետություններում: Արդյունաբերական տեխնոլոգիան և

արտադրանքի որակն ընդունելի էին ԽՍՀՄ-ի պայմաններում, սակայն, բացառությամբ ռազմական որոշ տեխնոլոգիաների, 10-20 տարով հետ էին մնում միջազգային ստանդարտներից: Քվտանների վրա հիմնված և սպառողների ու կառավարիչների ինստիտուտ չունեցող տնտեսությունից շուկայական համակարգի անցնելու ընթացքում հնացած տեխնոլոգիան և միջազգային արդյունաբերության կամ շուկաների մասին տեղեկությունների բացակայությունը ստեղծեցին խիստ ծանր կացություն, երբ շատ ձեռնարկություններ ի վիճակի չգտնվեցին նոր պայմաններում շարունակել իրենց գործունեությունը:

Հայաստանը, ի լրումն, տուժում է նաև Ադրբեջանի հետ իր ունեցած առնակատուժից և, դրան ի հետևանք, սահմանների շրջափակումից:

Հայաստանի արդյունաբերական քաղաքականության ձևավորումը հեշտ խնդիր չէ, սակայն, ընդունելով իրականությունը և ի մի բերելով առկա մարդկային և այլ ռեսուրսները, հնարավոր է ո՛չ միայն մշակել, այլև իրականացնել նման քաղաքականություն:

Արդյունաբերական քաղաքականությանը վերաբերող առաջարկություններ կան գետեղված օտարերկրյա նվիրատուների կողմից իրագործվող որոշ աջակցման ծրագրերում: Չեկույցներում ներկայացված այդ առաջարկություններից շատերը կա՛մ չեն համապատասխանում Հայաստանի արդի պայմաններին, կա՛ն էլ հիմնված են հորիզոնական հավասար հնարավորությունների սկզբունքների վրա, որոնք, կիրառելի լինելով զարգացած երկրներում, Հայաստանի պարագայում փաստորեն ստվա չեն: Բացի այդ, նշված առաջարկությունները մշակվել են առանց երկրի իրավիճակի կամ ներուժի նախնական բավարար ուսումնասիրման:

ԱԱՆ-ը 1998թ. սկզբներին, մի բրիտանական ֆիրմայի առաջարկությունների ներքո, ձեռնամուխ էր եղել խոշոր վերակազմավորման անցկացմանը: Ներկայումս նախարարությունն ունի քաղաքականության մշակման այնպիսի ստորաբաժանումներ, ինչպիսիք են արդյունաբերական քաղաքականության բաժինը, ներդրումների և արտահանման քաղաքականության վարչությունը, տարածքային զարգացման քաղաքականության բաժինը և ՓՄՁ-երի աջակցման բաժինը, սակայն քիչ են այն փորձագետները, որոնք խանդավառ են արդյունաբերական քաղաքականության և ներդրումային-արտահանական քաղաքականության ձևավորման նկատմամբ:

Քաղաքականության հետ կապված խնդիրները բազմազան են՝ փլուզված ճյուղերի դասակարգումն ու վերակառուցումը, նոր ճյուղերի խթանումը, ՓՄՁ-երի աջակցումը, գործարարության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը, արտահանման ընդլայնումը և օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումը:

ՓՄՉ-երի խթանման առումով ԱՄՆ-ը, հանրագումարի թերևով TACIS-ի համապատասխան օգնության ծրագրի արդյունքները, սլաքաստուն և ՓՄՉ-երի խթանման քաղաքականությանը, իրականացնող պետական մարմնին, պահանջվող օրենքների նախագծերին և այլնին վերաբերող փաստաթղթերի մի ամբողջ վաթեր:

Պետք է հուսալ, որ քաղաքականության մշակման աշխատանքներն իրականացվում են, հիմնվելով ՓՄՉ-երին դիմակայող խնդիրների առարկայական գնահատման և երկրի ուժեղ ու բույլ կողմերի վերլուծության վրա:

(2) Առևտրային քաղաքականությունը

Հայաստանի առևտուրը, ինչպես ցույց է տրված 2.1.1-ում թերված աղյուսակ 2.1.1.2-ում, վկայում է այն մասին, որ ներմուծման տարեց-տարի շարունակական աճին զուգընթաց արտահանումն անկում է ապրում, ինչի հետևանքով առկա է առևտրային դեֆիցիտի մշտնջենական ընդլայնում, որը 1998թ. հասել էր արդեն 672,3 միլիոն ԱՄՆ դոլարի: Աղյուսակ 2.2.2.1-ը ներկայացնում է առևտրի ծավալն ըստ շուկաների, իսկ աղյուսակ 2.2.2.2-ը՝ առևտրի ապրանքային կառուցվածքը:

Բացառությամբ Բելգիայի հետ առևտրի, ինչը համարյա թե հավասարակշռված է՝ շնորհիվ արտահանողների մշակման վերաբերյալ եղած պայմանագրի, գրեթե մյուս բոլոր երկրների հետ առևտուրը բնորոշվում է զգալի դեֆիցիտով (Թուրքմենստանի հետ ունեցած ավերարդն անցյալ պարտավորության կատարողականի արդյունքն է): Ապրանքների առումով բոլոր խմբերում էլ առկա է ներմուծման ևսկան զերազանցում՝ բացառությամբ մետաղի ջարդոնի, որը դասված է ոչ քանկարժեք մետաղների շարքում:

Արդյունաբերական ճյուղերի, արտադրական սարքավորման, սննդամթերքի և տեղական օգտագործման սպառողական ապրանքների մեծ մասի առումով Հայաստանը կախված է ներմուծումից: Երկրի ներքին շուկան փոքրածավալ է: Արտահանական ապրանքների տեսականին խիստ սահմանափակ է:

Վերոնիշյալ գործոնները թերեւ են նրան, որ առևտրային դեֆիցիտն արդեն իսկ հասել է ՀՆԱ-ի 1/3-ի սահմանը: Այն հանդիսանում է ընթացիկ հաշվի դեֆիցիտի կառուցվածքային պատճառը և հանգեցնում է արտաքին փոխառությունների ավելացմանը: Մրանից ելնելով՝ միանգամայն սխալ է, որ Հայաստանի առևտրային քաղաքականությունը պետք է թեևովի արտահանման ընդլայնման վրա կամ, այլ խոսքերով, նախատեսվողովի արտահանական ճյուղերի (ներառյալ՝ ներմուծմանը փոխարինող ճյուղերի) խթանմանը, և որ առևտրային քաղաքականությունը պետք է դիտարկվի արդյունաբերական քաղաքականության հետ ներդաշնակության լույսի ներքո:

Աղյուսակ 2.2.2.1 Արտաքին առևտրի բաշխումն ըստ շուկաների (նրն ԱՄՆ դոլար)

	Արտահանում		Ներմուծում		Հաշվեկշիռ Ծավալը
	Ծավալը	%	Ծավալը	%	
Ընդամենը	223,4	100,0	895,7	100,0	-672,3
ԱՊՀ երկրներ	81,1	36,3	221,4	24,7	-140,4
(որից)					
Ռուսաստան	39,9	17,9	182,7	20,4	-142,7
Թուրքմենստան	22,7	10,2	0,6	0,1	22,1
Այլ	18,4	8,4	38,2	4,3	-19,8
ԵՄ	75,0	33,6	259,4	29,0	-184,4
(որից)					
Բելգիա	49,8	22,3	54,6	6,1	-4,8
Գերմանիա	9,4	4,2	34,0	3,8	-24,6
Իտալիա	0,4	0,2	34,6	3,9	-34,2
Անգլիա	6,2	2,8	69,1	7,7	-62,9
Այլ	9,1	4,0	67,0	7,5	-57,9
Իրան	31,7	14,2	63,8	7,1	-32,1
Թուրքիա	3,0	1,3	56,6	6,3	-53,6
ԱՄԷ	6,2	2,8	54,1	6,0	-47,8
ԱՄՆ	12,5	5,6	97,9	10,9	-85,5
Այլ	13,9	6,3	142,4	15,9	-128,5

(Աղբյուրը՝ Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն)

Աղյուսակ 2.2.2.2 Արտաքին առևտրի կառուցվածքը (միլիոն ԱՄՆ դոլար)

	Արտահանում		Ներմուծում		Հաշվեկշիռ Ծավալը
	Ծավալը	%	Ծավալը	%	
Ընդամենը	223,4	100,0	895,7	100,0	-672,3
Կենդանիներ և սննդամթերք	18,3	8,1	294,5	33,0	-276,2
Հանքային արտադրանք	31,7	14,2	197,6	22,1	-165,9
Քիմ.արտ-ք, կաուչուկ և այլն	10,2	4,6	102,0	11,3	-91,8
Գործվածք, տեքստիլ արտ-ք	13,6	6,1	31,7	3,5	-18,1
Թանկարժ. մետաղ. և քարեր	53,1	23,8	45,5	5,1	7,6
Ոչ քանկարժեք մետաղներ	40,4	18,1	20,4	2,3	20,0
Մեքենաներ և սարքավորում	40,1	18,0	78,8	8,8	-38,7
Այլ ապրանքներ	16,1	7,2	125,2	13,9	-109,1

(Աղբյուրը՝ Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն)

Հետազոտական քիմը, դժբախտաբար, չի կարող վկայակոչել նման առևտրային քաղաքականության լուրջ բննարկումների օրինակներ: Գոյություն չունեն կոնկրետ պլաններ, որոնք ուղղված կլինեին արտահանական ճյուղերի զարգացմանը կամ արտահանման բնդլայնմանը:

Չարգացման հայկական գործակալությունը, ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի փորձագիտական ղեկավարման ներքո, ձեռնարկել է հետազոտություն արտահանման զարգացման ուղղակարության շուրջ և որպես առաջին փուլ բննության է ենթարկել առաջարկի առումով առկա խնդիրներն ու ներուժը, որոնք իրենց ամփոփումն են գտել 1999թ. փետրվարին կազմված՝ «Արտահանական առաջարկի ուսումնասիրություն - ARM 98/003» վերնագրով միջանկյալ զեկույցում (այդ հետազոտության ընթացքում որդեգրվել են HCA-ի հետազոտական մեթոդաբանության որոշ սարքեր): Եզրահանգումն այն է, որ բննության առված 7 ենթահատվածներից 6-ը, այն է՝ ոսկերչությունը, էլեկտրատեխնիկական և էլեկտրոնային արդյունաբերությունը, մեքենաշինությունը և բաղադրիչների (կոմպոնենտների) արտադրությունը, քեքև արդյունաբերությունը, սննդարդյունաբերությունը և համակարգչային ծրագրերի պատրաստումն ունեն արտահանման խթանման ներուժ: Քիմիական արդյունաբերությունը, ի նկատի առնելով խնդիրների բազմությունը և վերականգնման համար սահանջվող ներդրումների խոշոր ծավալը, բացառվել է ուսումնասիրվող ճյուղերի ցանկից:

Հետազոտության ներքո էլեկտրատեխնիկական և էլեկտրոնիկական, մեքենաշինությունն ու բաղադրիչների արտադրությունը, քեքև արդյունաբերությունը և համակարգչային ծրագրերի պատրաստումն բնարվել են որպես հետագա հետազոտման ենթակա ճյուղեր, որոնց համար արդյունքում պետք է մշակվի արտահանման խթանման հետևողական և կոնկրետ քաղաքականություն:

ՉՀԳ-ը 1999թ. սկսել է ընդունել արտահանման և ներդրումների խթանման համար անտոկոս վարկերի տրամադրման դիմումներ, որոնց սղրբյուն է համղխանուն Համաշխարհային բանկի Ձեռնարկությունների աջակցման հիմնաղրամը (1 միլիոն ԱՄՆ դոլար):

Առևտրային քաղաքականության հետ կապված հարկ է հատուկ անղրաղարծ անել Առևտրի համաշխարհային կազմակերպությանը՝ ԱՀԿ-ին անղամակցելու Հայաստանի ցանքերին: 1993թ. Հայաստանը որոշում կայացրեց դիմել անղամակցելու ԱՀԿ-ին և այդ ժամանակվանից սկսած համառորեն և ամնկուն կերպով առաջ է շարժվում դեպի իր նպատակը, այն է՝ 1999թ. կեսերին ձևոք բերել այդ կազմակերպության անղամի կարգավիճակ: Ինչպես ցույց է տրված բաժին 2.2.3 (2)-ում, ապրանքների մեծ մասի ներմուծման մարսատորքերն իջեցվել են գրոյի: ԱԱՆ-ի այն բաժինը, որ զբաղվում է ԱՀԿ-ի հարցերով, հաստիքավորված է միջազգային տեսածիր ունեցուղ զերազանց մասնազեռներով:

(3) Առավելությունները և թերությունները

Մասսաֆոր հատվածի զարգացման և օտարերկրյա ուղղակի ներդրումների հեռանկարի առումով Հայաստանի արդի սլայմաններում համակցված են մի ամբողջ շարք համեմատական առավելություններ և թերություններ: Շատ հաճախ ուժեղ կողմը և բույլ կողմը՝ դրանք մեղալի երկու երեսն են, կամ մեկի տեսակետից բույլ կողմը մյուսի համար այդպիսին չէ:

Թեպետև Հայաստանը սահմանափակ գնողունակությամբ ու սահմանափակ շուկայով փոքր երկիր է, այն Կովկասի երկրների հետ փոխադրակապի համար ռազմավարական դիրք է զբաղում՝ երկրներ, որոնց հետ Հայաստանն ունի կենսակերպային ու մշակութային ընդհանրություններ: Ներկայումս սահմանները Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ են և արտաքին աշխարհի ցամաքային ելքի հնարավորություն առկա է լոկ հյուսիսում՝ Վրաստանի, և հարավում՝ Իրանի վրայով: Սրանից ամանցվող սրամապորտային պայմանները, որոնք ավանդորեն չեն համարվել բույլության գործոն, պատճառ են դարձել բարձր տրամապորտային ծախսերի և դարձել առավել լուրջ բույլ կողմերից մեկը:

Հայկական ձեռնարկատիրոջ համար տանելի սլայմաններով միջոցներ ներգրավելու անկարողությունը հանդիսանում է կարևոր համեմատական թերություն, բայց օտարերկրյա ընկերության համար, որն ունի դրսից բարենպաստ սլայմաններով միջոցներ ձեռք բերելու հնարավորություն, Հայաստանի բարձր տոկոսադրույթերը և հայկական բանկերի՝ վտրկեր տրամադրելու անուանակությունն իրենցից չեն ներկայացնում համեմատական թերություն:

Հայաստանի խոշորագույն առավելությունը՝ դա բարձրակիրք ու ջանասեր աշխատուժի առկայությունն է: Շատերն օժտված են խիստ աշխատանքային էթիկայով, աչքի են ընկնում ստեղծագործական ոգով և խոստով են երկու՝ ռուսերեն ու անգլերեն լեզուներով: Ասվում է, որ դժբախտությունը ստեղծարարության և եռանդի աղբյուրն է, սակայն հայ ժողովուրդը, որ երկար ժամանակ տոկացել է իրեն բաժին հասած փորձություններից, բնութագրվում է կենսունակությամբ և փոփոխվող միջավայրին հարմարվելու գերազանց ընդունակությամբ: Ներդրողները հնարավորություն կունենան օգտագործելու այս գերազանց աշխատողներին, ընդ որում վճարելով ցածր աշխատավարձ:

Օտարերկրյա ներդրողների հայեցակետից ներդրումների սրտոնյալ հարկման համակարգը, որ ստաջարկվում է հայկական կառավարության կողմից, չի պարունակում բավարար խթաններ, և այն կարելի է գրեթե թերություն համարել: Հայկական ձեռնարկությունների համար մինչև 1998թ. վերջը գործում էր արտոնյալ հարկման մի ռեժիմ, որի ներքո նրանք կարող էին շարունակ շահել՝ ամեն երկու տարին մեկ ստեղծելով նոր

ձեռնարկություն և շահարարելու գործը փոխանցելով այդ նոր ձեռնարկությանը. այսպիսով, վերջիններիս տեսակետից դա ստավելություն էր:

Ե՛վ հայրենական, և՛ օտարերկրյա ներդրողների համար բարենպաստ է այն, որ գոյություն ունեն բազում սխալապարտադրածքներ, որոնք կարելի է ձեռք բերել էժան գնով: Ռոջ աշխարհով մեկ, այդ բվում՝ Եվրոպայում և Արևելյան Նահանգներում, մոտ 5-միլիոնանոց գործուն սփյուռքի սովալայությունը նույնպես ստավելություն է:

Սնկ այլ լրացուցիչ ստավելություն, որն ունի Հայաստանը՝ համեմատած ԱՊՀ մյուս երկրների հետ, դա ազատ արտաքին տնտեսական հարաբերությունների կիրառումն է՝ որպես ԱՀԿ-ին անդամակցելու նախապատրաստություն: Թեպետ դա այնքան էլ որոշակի չէ բաղաբականության մեջ, բայց և այնպես կատավարությունը, նարտակ հետապնդելով սպախովել գրադվածության պատշաճ մակարդակ, դրական կեցվածք է ընդունել արտադրության վերակաման, մրցունակ տեխնոլոգիաների ու կատավարման եղանակների ներդրման և օտարերկրյա ներդրումների ներգրավման նկատմամբ և, կախված տվյալ նախագծից, պատրաստ է դրսևորել ճկուն հակազբում:

Աղյուսակ 2.2.2.3-ում բերված են Հայաստանի ստավելություններն ու բերությունները, բայց դրանցից յուրաբանչյուրն ըմբռնելու համար հարկ է ի նկատի ունենալ վերը շարալրվածը:

Աղյուսակ 2.2.2.3 Ատավելություններն ու բերությունները

Ատավելությունները	Թերությունները
- Բարձր մտավոր մարդկային ռեսուրսներ	- Թույլ կատարողական (ֆինանսական դեֆիցիտ, առևտրի վիթխարի դեֆիցիտ, միջազգային վճարումների կնճիո ևն)
- Առկա պատրաստակամ աշխատուժ	- Փոքր ներքին շուկա
- Դարերի խորջից եկող բացառիկ կարողություններ	- Թույլ ֆինանսական հատված - բարձր տոկոսադրույթ
- Զօգտագործվող արտադրական հարմարությունների առկայություն	- Վստահության պակաս
- Կարևոր աշխարհաքաղաքական դիրք	- Փոխադրումների սահմանափակություն և թանկություն
- Գիտահետազոտական մեծ ներուժ	- Անկայուն ու թանկ էներգամատակարարում և հեռահադորդակցություն
- Հանգամանքներին հարմարվողություն	- Որակյալ և երիտասարդ աշխատուժի արտագաղթ
- Որակյալ, բայց էժան աշխատուժ	- Օտարերկրյա ներդրումների ոչ այնքան գրավիչ խթաններ
- Մի քանի լեզուների իմացություն	- Երջափակված սահմաններ Ադրբեջանի և Թուրքիայի հետ
- Կլիմայական պայմաններ... Ռեսուրսներ գրոսաշրջության և գյուղատնտես. համար	
- Հմուտ առևտրականներ՝ աշխարհասփյուռ ցանցով	
- Սերտ կապեր Սփյուռքի հետ, որը կարևոր դեր է խաղում շատ երկրների կյանքում	

(4) Ներդրումների խթանման քաղաքականությունը

Նոր բիզնեսի ստեղծումը Հայաստանում միանգամայն գործուն քնույր է կրում: 1999թ. հունվարի 1-ի դրությամբ երկրում կար 38352 ձեռնարկություն (այստեղ չեն ներառվում պետական հաստատություններն ու պետական ծառայության կազմակերպությունները): 1998թ. հունվարի 1-ին եղած 35080 ձեռնարկություններից 2398-ը դուրս են գրվել ռեզիստրից, իսկ նորովի գրանցվել է 5670 ձեռնարկություն (ներառյալ վերակազմավորումները): Աղյուսակ 2.2.2.4-ում բերված է ձեռնարկությունների բաշխումն ըստ տնտեսության հատվածների:

Աղյուսակ 2.2.2.4 Ձեռնարկությունների քիվը

Հատվածներ/Ներառվածներ	Առ 1.1. 1998	Առ 1.1. 1999	Աճը
Գյուղատնտեսություն (ներառյալ անտառտնտեսություն և ձկնորսություն)	2089	2342	253
Հանքարդյունաբերություն	49	54	5
Վերամշակող արդյունաբերություն	6642	7300	658
Էլեկտրա-, գազա- և ջրամատակարարում	361	382	21
Շինարարություն	2336	2275	-61
Մեծածախ և մանրածախ առևտուր, վերանորոգում	19600	21551	1951
Հյուրանոցներ և ռեստորաններ	951	1042	91
Տրանսպորտ, պահեստային տնտեսություն և հաղորդակցություն	1089	1147	58
Ֆինանսներ	101	123	22
Անշարժ գույքի գործառնություններ և առևտրային գործունեություն	1862	2136	274
ԸՆԴՊԱԾՆԵՐ	35080	38352	3272

Դիտարկություն. ցուցանիշներում կարող են ներառված լինել որոշ պետական ձեռնարկություններ (Աղբյուրը՝ նույնը, ինչ աղյուսակ 2.2.2.1-ի դեպքում)

Աղյուսակ 2.2.2.4-ից երևում է, որ 21551 ձեռնարկություններ գրանցված են մեծածախ ու մանրածախ առևտրով և վերանորոգման զանազան ծառայությունների մատուցմամբ, ինչը տիպական է Հայաստանի արդի տնտեսության համար: Որոշ հատվածներում, ըստ երևույթին, ընդգրկված են նաև պետական ձեռնարկությունները, և երբ ներ առնվելին միայն մասնավոր հատվածի ձեռնարկությունները, ապա նշված առևտրային հատվածի տեսակարար կշիռը կարող է կազմեր ավելի քան 60% (հսպունդիայում կամ մեծածախ ու մանրածախ առևտրի և հասարակական սննդի շատ ձեռնարկություններ [վիճակագրորեն մեկ միասնական խմբի են պատկանում], որոնց, այնուամենայնիվ, բաժին է ընկնում ընկերությունների ընդհանուր քվի սոսկ 27%-ը):

Ձեռնարկությունների բանակի զուտ աճը (նոր գրանցվածներ -- գրանցումից դուրս եկածներ) նույնպես վկայում է առևտրային հատվածի մեծ տեսակարար կշռի մասին, որին բաժին է ընկնում զուտ աճի 60%-ը: Վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռն ըստ ձեռնարկությունների քվարանակի կազմում է 19%, իսկ շինարարության կշիռը՝ 6%:

Բերված աղյուսակից հետևում է, որ արդյունաբերական ձեռնարկությունների քիվն ավելացել է 658-ով, սակայն վերջինս հավանաբար ներառում է շատ անվանապես նոր այնպիսի ձեռնարկությունների, որոնք ստեղծվել են շահույթահարկի գծով արտոնյալ հարկումից օգուտ քաղելու նպատակով, և հնարավոր չի սահմանել, քե որքան է կազմել իրապես նոր ձեռնարկությունների քիվը:

Չնայած վերը բերված տվյալները վերաբերում են միայն ձեռնարկությունների քիվին և աճհարկի է անել ընդհանրացումներ, սակայն, այսպես քե այնպես, դրանք ցույց են տալիս, որ Հայաստանի ներկա տնտեսական պայմաններում միջավայրն այնպիսին է, որ խրախուսում է փոքր կապիտալ սրահանջող ու ևտզման կարճ ժամկետ ունեցող ներդրումները, այսինքն՝ ներդրումները առևտրի կամ հասարակական սննդի բնագավառում: 1999թ. հունվարի 1-ի դրությամբ կար օտարերկրյա 434 մասնաճյուղ և 608 համատեղ ձեռնարկություն:

Աղյուսակ 2.2.2.5-ում բերված են 1998թ. գրանցված ձեռնարկությունների քանակը և կապիտալի զեկուցված գումարները:

Աղյուսակ 2.2.2.5 1998թ. ընթացքում գրանցված ձեռնարկությունները

		Թիվը	Կապիտալ (մլն դրամ)	(մլն ԱՄՆ դոլար)
1998թ. գրանցված ձեռնարկություններ		443	30483	60,4
որի 9	Օտարերկրյա ներդրումներ	313	7680	15,2
	Համատեղ ձեռնարկություն	174	5187	10,3
	100% արտերկրյա կապիտալ	139	2493	4,9

Գիտողություն. կապիտալը՝ դա փաստաբարում հայտարարագրված կապիտալի գումարն է (և ո՛չ քե վճարված բաժնետիրական միջոցները) (Աղբյուրը՝ նույնը, ինչ աղյուսակ 2.2.2.1-ի դեպքում)

Ստույգ էլնելով վերոհիշյալ ցուցանիշներից, օտարերկրյա գրանցվածների քիվն ընդհանուր առմամբ կազմել է 313, բայց մեկ ձեռնարկությանն ընկնող ներդրման ծավալը, եքե հայտարարագրված ուղջ գումարը համարենք իրապես ներդրված, կազմել է 50000 ԱՄՆ դոլարից պակաս, ուստի մեծ մասը եղել են փոքր ձեռնարկություններ:

Թեպետև Հայաստանում, առաջին հայացքից, արդեն իսկ ստեղծվել է ներդրումային միջավայր (տես բաժին 2.2.3) իրավական համակարգի, հարկային համակարգի և այլ ոչ

Ֆիզիկական ենթակառուցվածքների առումով, այսուամենայնիվ, եթե ի նկատի առնենք հանրաբարոյաբանական և վերամշակույթ արդյունարկության ոլորտում ներդրումների կատարման ու շահույթի ստացման միջև ընկած ժամանակաշրջանի տևականությունը, ապա պարզ կդառնա, որ, չնայած Հայաստանի առաջարկած շատ առավելություններին (օրինակ՝ բարձրորակ աշխատուժին), փոխադրումների վատ պայմանների և բարձր ծախսերի, փոքրածավալ շուկայի և Ադրբեջան ու Թուրքիա փաճառահանկու սահմանափակումների պարագային Հայաստանի ներդրումային միջավայրը ներկա իրավիճակում կորցնում է իր գրավչությունը:

Հայկական տնտեսության վերականգնման համար անհրաժեշտ է մեծ քափով ներգրավել փոքր ներդրումներ առևտրային հասված կամ ներքին շուկա, իսկ որ առավել կարևոր է, հարկ է օտարերկրյա միջին ու խոշոր ներդրումներ ներգրավել վերամշակույթ ճյուղերում, ուր ստեղծվում է մեծ ավելացված արժեք և որոնք ի վիճակի են դառնալ արտարժույթի վաստակի (կամ խնայողության) աղբյուր: Այս նպատակով անհրաժեշտ են նոր օրենքներ ու կառույցներ, որոնք բույլ կտային ստեղծել ներդրումների համար իրոք բարենպաստ մի միջավայր:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները, ի լրումն ուղղակի տնտեսական օգուտների, զուգահեռաբար բերում են ոչ նյութական օգուտներ՝ գործարարության և կառավարման փորձի ու գիտելիքների տեսքով, որոնց կարիքը Հայաստանում զգացվում է: Ուստի, ներդրումների հարցերը բնության առնելիս հարկ է ի նկատի ունենալ նաև այս վերջին հանգամանքը: Օտարերկրյա ընկերությունները գործը կվարեն իրենց ճանապարհով՝ պատրաստելով միջազգայնորեն ընդունված ֆինանսական հաշվետվություններ, իրենց աշխատողներին կներարկեն ազատ շուկայական տնտեսության սկզբունքները և, բացի այդ, շփումներ կունենան տեղի գործընկերների՝ հումքի մատակարարների, առևտրականների, բանկերի հետ և դրանով իսկ կընձեռեն ազատ շուկայի սրայմաններում գործարարությամբ զբաղվելու եղանակներին տիրապետելու լավ հմարավորություն:

1998թ. կեսերից մինչև տարեվերջ համակարգչային ծրագրերի մշակման ոլորտում ամերիկյան ֆիրմաների հետ ստեղծվեցին 9 համասեղ ձեռնարկություններ: Այս ճյուղում արտադրանքի փոխադրման կամ նյութերի մատակարարման խնդիրը, որ Հայաստանին դիմակայող հիմնական քերությունն է, ոչ մի դեր չի խաղում (բեկ հաղորդակցությունը կարող է բանկ լինել), և երկրի կարևորագույն առավելությունը՝ մտավոր ռեսուրսներն իրենց օգտագործում են զանում միջազգային ասպարեզում: Մա, սլետք և ասել, ցանկալի ոլորտ է օտարերկրյա ներդրումների համար, չնայած որ փաստացի ներդրումների ծավալը դեռ հեռու է բավարար լինելուց:

(5) Սեփականաշնորհման քաղաքականությունը

Հայաստանի կառավարությունը հանձն էր ստել մինչև 1999թ. մարտը սեփականաշնորհել գյուղատնտեսական հողերի 95%-ը, 1878 մեծ և միջին ձեռնարկություն (դրանց որոշ մասը չգրավեց գնորդներին, և իրականում սեփականաշնորհվեց ընդամենը 1460 ձեռնարկություն – տե՛ս աղյուսակ 2.1.1.3-ը բաժին 2.1.1-ում), անավարտ շինարարության 117 օբյեկտ և 6678 փոքր օբյեկտ: Գյուղատնտեսական հողի՝ որպես գրավի դիմաց վարկեր ձեռք բերելու համակարգը գործում լինելու նշաններ է ցույց տալիս:

Մինչև 1997թ. վերջը սեփականաշնորհումը մեծով մասամբ իրականացվում էր վաուչերների միջոցով, բայց դրանից հետո ներդրվեցին աճորդներ, այդ բվում՝ միջազգային աճորդներ: Վերջերս կիրառման մեջ դրվեց այս նպատակով նաև Երևանի Գոնդրային բոլոսան օգտագործելու մոտեցումը:

Ի հեճուկա Սեփականաշնորհման նախարարության՝ մասնավորեցման արդարացիությունն ապահովելուն ուղղված ջանքերի, Հայաստանում սեփականաշնորհման գործընթացը, ԱՊՀ այլ երկրների նման, իր մեջ անարդարացիության և անբախանցիկության տարրեր էր պարունակում: Սակայն, հաշվի առնելով ԽՍՀՄ-ի փլուզմանը հաջորդած քաղաքական, սոցիալական և տնտեսական փոթճությունները և գործընթացի նոր լինելն իրականացնողների ու օգտատուների համար, ինչպես նաև հայերի սփանդրական արժեքները, կարելի է ասել, որ այն շատ կողմերով իրագործվեց նորմալ կերպով: Մա, իհարկե, անցած իրողություն է, բայց դրա որոշ հետևանքներ զգացվում են առ այսօր: Մտորե բերվող հանգամանքները Հայաստանում բացահայտ մատնանշման առարկա են:

- Էժան գնով վաուչերներ (հավաստագրեր) գնած շատ կառավարիչներ ու ներդրողներ սկզբունքորեն չահագրգռված են իրացնել իրենց՝ իրականի համեմատ ծայրահեղ ցածր գներով ձեռք բերած գանազան ունեցվածքը, այն է՝ գույքապաշարը, հումքը, սարքավորումը, շենքերն ու հողօգտագործման իրավունքը և արագ շահույթ ստանալ, ուստի ամեննին էլ հետաքրքրված չեն արտադրության վերսկսմամբ: Եղել են դեպքեր, երբ ներդրողներն իրանցի գնորդին են վաճառել սարքավորումն ու սխալաբան պաշարները և կարճ ժամկետում վաատակել իրենց ներդրումներին բազմակի զերազանցող շահույթ:
- Գրավիչ սեփականության աճորդի արդյունքները հաճախ կանխորոշվել են կապիտալի տեր ազդեցիկ մարդկանց նախնական հանդիպումների ընթացքում: Այլ գնորդներն այս կամ այն միջոցով հեռու են սրահվել աճորդին մասնակցելուց: Ի արդյունք,

ձեռնարկությունը վաճառվել է իր իսկական արժեքին Լակամորեն գիջող գնով: Սեփականաշնորհման ենթակա ընկերությունը հաճախ, դիտավորյալ կերպով վնասներ ցույց տալով, իջեցնում էր իր արժեքային գնահատականը:

- Մրցույթի համար առաջադրված նվազագույն գները երբեմն նշանակալի չափով իջեցվում էին:
- Սեփականաշնորհված փոքր ձեռնարկությունների բանակը կազմել է սլավոնային ցուցանիշի 82,5%-ը, մինչդեռ վաճառքի ընդհանուր արժեքը կազմել է սահմանված գումարի ընդամենը 54,9%-ը:
- Ինչու՞ պետք է Երևանի կոնյակի գործարանը ֆրանսիական ընկերությանը վաճառվեր 30 միլիոն ԱՄՆ դոլարով. շատ մարդիկ առ այսօր տարակուսում են այդ գործարքից:
- Հաղորդակցության բիզնեսը՝ ռազմավարական նշանակության ենթակառուցվածքային ոլորտը վաճառվել է հունական կոնցերնին, ընդ որում շնորհելով շահագործման 15 տարվա բացառիկ իրավունք: Հայաստանի տեղեկատվական ճյուղում սա խոչընդոտում է մրցունակ շուկայի ձևավորմանը, և սպառողները թերևս ստիպված լինեն բարձր վճարելու տեղեկատվական ծառայությունների դիմաց (այս հարցը բազմաթիվ անգամ քննարկումների նյութ է դարձել խորհրդարանում):

Վերը բերված հանգամանքները (եթե նույնիսկ դրանք իրական են) տեղ են գտել նաև ԱՊՀ մյուս երկրներում, և այդ չարքում Հայաստանի օրինակը վատագույնը չէ: Համեմատած Ռուսաստանի և մի քանի այլ երկրների հետ, ուր խաղաքարտի վրա էին դրված մեծարժեք իրավունքներ ու կոնցեսիաներ, Հայաստանում եղած չարաչափումները զգալիորեն ավելի համեստ բնույթ էին կրում:

Փոքր ձեռնարկությունները, ֆերմերներն ու առևտրականները վաուչերներն օգտագործեցին և փաստորեն անվճար ձեռք բերեցին ձեռնարկություններ, խանութներ, հող և անասուն, սակայն պետական ծառայողները (սրաշտոնյաներ, ոստիկաններ, ոստոցիչներ և այլն) ի վիճակի չեղան սեփականաշնորհման միջոցով ձեռք բերել որևէ գույք, բանի որ շենքերն ու համալսարանները շարունակում էին մնալ պետական սեփականություն: Բնակարանների սեփականաշնորհման ընթացքում ոմանք շահեցին, մինչդեռ մնացածները ձեռքից բաց բողեցին ընձեռված հնարավորությունը: Հաշվի առնելով ստեղծված պայմանները, սա պետք է համարել անխոստափելի անարդարության դրսևորում:

Հրապարակայնությունը՝ դա սեփականաշնորհման գործընթացում պահանջվող ամենակարևոր հատկանիշն է: Սեփականաշնորհման նախարարության պարտքն է հասկանալի ձևով հանրությանը տեղյակ պահել 1460 ձեռնարկությունների

սեփականաշնորհման գների և այդ ձեռնարկությունների ներկա վիճակի մասին: Հետագա սեփականաշնորհման ժամանակ գույքի գնահատման կիրառելի եղանակները ևս պետք է հայտնի դառնան հանրության լայն զանգվածներին:

Մի քանի խոշոր ձեռնարկություններ, այդ թվում «Հայկական ավիատոլիները», առաջխաղացում են ապրում նոր մոտեցման ներքո: Հայաստանի կառավարությունը կազմել է Լներգետիկայի սեփականաշնորհման համակողմանի պլան 1997 – 2000թթ. ժամանակաշրջանի համար: Համաձայն պլանի, տնտեսության այս հատվածը պետք է սրբոժի Էլեկտրաէներգիայի սրտայրության ձեռնարկությունների, հաղորդման գլխավոր համակարգի և հաղորդման ցանցի:

Սեփականաշնորհումից պետական եկամուտները 1999թ. հունվարի դրությամբ կազմել են ընդհանուր առմամբ 44,7 միլիարդ դրամ (մոտավորապես 90 միլիոն ԱՄՆ դոլար): Պարզ չի, քե ինչպես է ծախսվել այս գումարը, բայց մտավախություն կա, որ դրա մեծ մասն օգտագործվել է բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորելու նպատակով:

ԱՄՀ-ը և Համաշխարհային բանկը խստագույնս հորդորել էին, որպեսզի սեփականաշնորհումից ստացված միջոցներն ի մի բերվեն Կենսաբուժական բանկի հատուկ հաշվում՝ հստակ կառավարման ներքո, և որ կառավարությունն իրեն իրավունք չվերստահի ազատորեն ծախսելու այդ միջոցները: